

Մ Ա Ս Ի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Կ Ա Ռ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն

Ձ Ե Կ ՈՒ Յ Ց Ը

Մ Ա Ս Ի-Ա

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2011 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման և
հարկաբյուջետային քաղաքականության հիմնական
ուղղությունները

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության գործունեության ծրագրի դրույթները և դրա իրականացումն ապահովող միջոցառումները, ինչպես նաև հաշվի առնելով ընթացիկ տարում արձանագրված տնտեսական զարգացումների միտումները, 2011թ.-ին ՀՀ կառավարության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը հիմնականում միտված է լինելու հակաճգնաժամային քաղաքականությունից դեպի կայուն տնտեսական զարգացմանը վերադառնալուն՝ իրականացնելով զարգացմանն ուղղված առաջնահերթ բարեփոխումներ:

Տնտեսական զարգացում

ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականությունը 2011թ.-ին հիմնականում նպատակաուղղված է լինելու տնտեսության դիվերսիֆիկացման խորացմանը և արտահանման կողմնորոշման ընդլայնմանը, իրականացվող տնտեսական քաղաքականության

սոցիալական ուղղվածության խորացմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, գործարար և ներդրումային միջավայրի էական բարելավմանը, տնտեսական աճը ապահովելու համար լրացուցիչ խթանների բացահայտմանն ու ներդրմանը՝ զուգահեռաբար իրականացնելով զարգացմանն ուղղված արդեն իսկ մեկնարկած բարեփոխումները և առաջնահերթ քաղաքականությունները:

Երկրի հեռանկարային տնտեսական զարգացման նոր ուղղությունների ձևավորման, տնտեսական աճ ապահովելու, արտահանման կողմնորոշում ունեցող մրցունակ ճյուղերի գերակշռության ապահովման, բնակչության զբաղվածության և բարեկեցության մակարդակների շարունակական բարձրացման նպատակով 2011թ.-ին իրականացվող առաջնահերթ միջոցառումներ կհանդիսանան:

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավումը Գործարար և ներդրումային միջավայրի բարելավման խնդիրները շարունակելու են մնալ ՀՀ կառավարության առաջնահերթ բարեփոխումների օրակարգում՝ առանցքային շեշտադրումն ուղղելով պետական-մասնավոր գործընկերության և կորպորատիվ կառավարման մշակույթի արմատավորմանն ու վարչարարական խոչընդոտների վերացմանը: «Բիզնես միջավայրի գերազանցության կենտրոն» համազգային նախագծի շրջանակներում կշարունակվեն աշխատանքները Հայաստանը տարածաշրջանում գործարար և ներդրումային միջավայրի «գերազանցության կենտրոն» դարձնելու ուղղությամբ:

Նպատակաուղղված քաղաքականություն կիրականացվի կորպորատիվ կառավարման մշակույթի ներդրմանն ուղղությամբ, ինչը կբարձրացնի գործադիր մարմինների պատասխանատվությունն ու փոքր բաժնետերերի պաշտպանվածությունը:

Կշարունակվեն աշխատանքներն ուղղված «Պետական-մասնավոր համագործակցության» հայեցակարգով նախատեսված դրույթների իրականացմանը, ինչը ներառում է օրենսդրական հիմքի և ինստիտուցիոնալ շրջանակի ձևավորման միջոցառումները:

Արտաքին առևտրի ոլորտում իրականացվող միջոցառումներն ուղղված կլինեն ՀՀ կառավարության կողմից որդեգրված արտաքին առևտրի ազատական սկզբունքի պահպանմանը: Առանցքային շեշտադրում կկատարվի Եվրամիության հետ խոր և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի ստորագրման բանակցությունները սկսելու համար անհրաժեշտ միջոցառումների իրականացմանը: Առանձնակի ուշադրության կարժանանան արտերկրներում հայրենական արտադրողի շահերի պաշտպանության և Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացման հետ կապված հարցերը:

Առևտրի և ծառայությունների ոլորտում 2011թ. իրականացվելիք միջոցառումներն ուղղված կլինեն սպառողական շուկայում հավասար մրցակցային դաշտի ապահովմանը, միջազգային պահանջներին համապատասխանող սպառողների շահերի պաշտպանության

համակարգի ձևավորմանը, գործարար էթիկայի կանոնների ու ստանդարտների ներդրմանը, ոլորտում հսկողության հարցում հասարակության հետ հետադարձ կապի ապահովմանը, տեղեկացված հասարակության ձևավորմանը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող հսկողության գործառնությունների իրականացման արդյունավետության բարձրացմանը, կորպորատիվ հսկողության կանոնների ստեղծման համակարգի ձևավորմանը:

Ստանդարտացման, չափագիտության, համապատասխանության գնահատման և տեխնիկական կանոնակարգման ոլորտներում նախատեսվող միջոցառումները հիմնականում նպատակաուղղված են լինելու սպառողների կյանքի, առողջության պահպանմանը, շրջակա միջավայրի համար անվտանգ արտադրանքի ներմուծման, արտադրման և ծառայությունների մատուցման ապահովմանը, ՀՀ-ում ստանդարտացման, չափագիտության, համապատասխանության գնահատման և տեխնիկական կանոնակարգման ոլորտների պետական քաղաքականության ձևավորմանը և զարգացմանը, պետական կառավարման մարմինների և մասնագիտացված կառույցների գործնեության համակարգմանը:

Կշարունակվեն աշխատանքները սպառողական շուկայում արտադրանքի և ծառայությունների որակի միջազգային ISO և եվրոպական CEN ստանդարտների ուղղակի կիրառման և ոչ կանոնակարգվող բնագավառներում որակի ապահովման պետական քաղաքականության ձևավորման ուղղությամբ:

Մտավոր սեփականության ոլորտում 2011թ. կշարունակվի բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործումը՝ այն Եվրամիության մի շարք դիրեկտիվներին համապատասխանեցնելու նպատակով: Մասնավորապես, ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման շրջանակներում կշարունակվեն մտավոր սեփականության բնագավառի օրենսդրության կիրարկման հետ կապված աշխատանքները:

Կիրականացվեն մի շարք խորհրդատվական-ուսուցողական ծրագրեր՝ գյուտարարներին և հայտատուներին ցուցաբերվող աջակցությունն ընդլայնելու նպատակով: Կշարունակվեն նաև աշխատանքները գիտության և տեխնիկայի նվաճումները, ինչպես նաև մտավոր սեփականության իրավական պահպանության, օգտագործման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվությունը գյուտարարներին, ինչպես նաև փոքր ու միջին ձեռնարկատերերին մատչելի դարձնելու ուղղությամբ:

Բնագավառին վերաբերող ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների շրջանակներում կշարունակվեն աշխատանքները արդյունաբերական սեփականության օբյեկտների համապատասխան տվյալների մշտապես համալրվող բազաների կատարելագործման և հանրությանը դրանց մատչելի դարձնելու ուղղությամբ:

Հեղինակային իրավունքի բնագավառում պետական քաղաքականությունն ուղղված կլինի ազգային մշակույթի և արվեստի զարգացման խթանմանը, որի համար կշարունակվի հետևողական պայքարը ներկայումս բացահայտ բնույթ կրող հենության (պիրատության) և բնագավառում առկա այլ իրավախախտումների դեմ:

Տնտեսության ճյուղերի և ենթակառուցվածքների զարգացումը

Միջազգային ստանդարտներին համապատասխան զարգացած ենթակառուցվածք ձևավորելու ռազմավարական նպատակի իրականացման համատեքստում առանցքային դերակատարում կունենա Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի իրականացումը, որը թույլ կտա երկրի հարավը կապել հյուսիսի հետ և ապահովել ելքը դեպի միջազգային շուկաներ: Մասնավորապես, ծրագրի իրագործումը կենթադրի ճանապարհների շինարարության, բարենորոգման և վերականգման իրականացում, ՀՀ սահմանների և մաքսային ենթակառուցվածքների արդիականացում և վերականգնում, ինստիտուցիոնալ աջակցություն ճանապարհային ենթաուղրտի զարգացման ծրագրի իրականացմանն ուղղված քաղաքականությանը, ինստիտուցիոնալ աջակցություն սահմանային և մաքսազերծման արդյունավետ գործընթացներին:

Կշարունակվեն աշխատանքները ազատ տնտեսական գոտիների ստեղծման ուղղությամբ, ինչը կնպաստի ավելացված արժեքի շղթայի ձևավորմանը, մասնավորապես՝ հայկական մրգերի և բանջարեղենի բրենդի ձևավորման և արտահանման խթանման նպատակով աշխատանքներ կիրականացվեն Զվարթնոց օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտու հիմնման, մարզերում գյուղմթերքների հավաքման կենտրոնների ստեղծման և համապատասխան օրենսդրական դաշտի կատարելագործման ուղղությամբ:

Արդյունաբերական քաղաքականությունը ուղղված կլինի Հայաստանում բարձր ավելացված արժեք ձևավորող, արդիական տեխնոլոգիաների և բարձր որակավորմամբ աշխատուժի հիման վրա կայուն զարգացող ինդուստրիաների ձևավորմանը: Առանձնակի ուշադրություն կցուցաբերվի հատկապես արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերությանը: Արդյունաբերության դիվերսիֆիկացման նպատակով կկարևորվի արտադրանքի մշակման խորացման գործընթացներին աջակցությունը հատկապես հանքահումքային, մեքենաշինական, քիմիական, ակնագործության և ոսկերչական արտադրատեսակների արտադրության, սննդի և թեթև արդյունաբերության ոլորտներում: Վերջնական արդյունք արտահանելու նպատակով կուսումնասիրվի պղնձաձուլարանի կառացման հարցը:

Տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը կարևորելով ոչ միայն որպես առանձին ոլորտ, այլ նաև որպես Հայաստանի տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության և մրցունակության բարձրացման գործիք, աշխատանքներ կիրականացվեն ընտրված թիրախային SS շուկաներում Հայաստանը առաջատար

երկիր դարձնելու, ինչպես նաև զարգացած և առաջադեմ տեղեկատվական հասարակություն ու գիտելիքների վրա հիմնված տնտեսություն ունենալու ուղղությամբ: ՀՀ կառավարությունը միջոցներ կձեռնարկի, որպեսզի Հայաստանն արտապատվիրվող ցածր արժեք ունեցող SS ծառայություններ մատուցող երկրից դառնա բարձր արժեքով առաջատար SS արտադրանք և ծառայություններ տրամադրող երկիր, ունենա հասարակություն, որը ձևավորված է միջազգային բարձր չափանիշներին համապատասխանող տեխնիկական կրթության, տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների ենթակառուցվածքի և համակարգչային գրագիտության հիման վրա:

Գիտելիքահենք տնտեսության ենթակառուցների ստեղծման գերակայության շրջանակներում ՀՀ կառավարությունն աջակցելու է հիմնարար գիտության արդյունքները տնտեսության մեջ ներդրմանը: Շարունակվելու են աշխատանքները Երևանի ֆիզիկայի ինստիտուտը Ա.Բ. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիայի վերակառուցման, կառավարչական բարեփոխումների և կարևորագույն կիրառական հետազոտությունների զարգացման ուղղությամբ: Միջուկային բժշկության ծրագրի շրջանակում 2011թ.-ին ձեռք կբերվի և Ա.Բ. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիայի տարածքում կստեղծվի Cyclone-18 ռադիոիզոտոպների արտադրության համալիրը, կստեղծվի ընկերություն, որը կհամակարգի ցիկլոտրոնի տեղակայումը, շահագործումը, ինչպես նաև ռադիոիզոտոպների իրացման և արտահանման խնդիրները:

Կշարունակվի իրականացվել Գյումրի քաղաքը տեխնոքաղաքի վերակառուցելու ծրագիրը, որի գերնպատակն է Գյումրին դարձնել ավանդական մշակութային նկարագիրը պահպանած և գործարարությամբ զբաղվող՝ “գերազանցության կենտրոնի” համբավ ունեցող, զարգացած քաղաք:

Տարածքային տնտեսական զարգացում

Տարածքային տնտեսական զարգացման ոլորտում պետական քաղաքականությունը հիմնականում ուղղված կլինի զարգացման անհամաչափությունների համահարթեցմանը՝ մարզերում ենթակառուցվածքների զարգացման և բարձրարժեք ծառայությունների մատուցման միջոցով:

2011թ. ընթացքում կիրականացվեն ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծմանն ուղղված միջոցառումներ: Կարևոր նշանակություն կտրվի մարզերում գյուղական համայնքները քաղաքային համայնքներին կապող ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին:

Տարածքային համաչափ զարգացման առումով առանցքային տեղ կունենան արդեն իսկ մեկնարկած և 2011թ. սկսվող խոշոր ենթակառուցվածքային ծրագրերը:

ՓՄՁ ոլորտի զարգացման պետական աջակցության ռազմավարական նպատակն է ավելացնել երկրում արտահանման կողմնորոշմամբ և ինովացիոն ներուժով ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը: Այդ առումով 2011թ. ոլորտում կարևորվելու են ՓՄՁ սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցությունը, ՓՄՁ սուբյեկտների գործունեության միջազգայնացումը, ՓՄՁ աջակցության գործող միջազգային կառույցներին և ցանցերին ինտեգրումը, սկսնակ ՓՄՁ սուբյեկտների ձեռներեցությամբ զբաղվելու հնարավորությունների ընդլայնումը՝ նախապատվություն տալով ՀՀ մարզերում, հատկապես հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտներին:

Չբոսաշրջության ոլորտում առաջնային միջոցառումներն ուղղված կլինեն նոր զբոսաշրջային երթուղիների, ուղղությունների և արդյունքների մշակմանն ու զարգացմանը: Այս առումով առանձնապես կկարևորվի Ջերմուկ քաղաքի զարգացման ռազմավարության միջոցառումների և “Տաթն” զբոսաշրջային կենտրոնի զարգացման ծրագրերի պատշաճ իրականացումը, ինչպես նաև Սևանա լճի ափին բարձրլեռնային մարզական կենտրոնի հիմնման ծրագրի նպատակահարմարության ուսումնասիրությունը և ծրագրի մշակումը: Առանձին ուշադրություն կդարձվի նաև մարքեթինգային քաղաքականության իրականացմանը՝ գովազդատեղեկատվական ապահովման համակարգի շարունակական զարգացման և կատարելագործման միջոցով, որի շրջանակներում կշարունակվեն համաշխարհային զբոսաշրջային շուկայում Հայաստանի՝ որպես զբոսաշրջության համար գրավիչ և բարենպաստ երկրի նկարագրի ամրապնդմանը, միջազգային համագործակցության ակտիվացմանը, զբոսաշրջության ոլորտում մատուցվող ծառայությունների կայուն որակի ապահովմանը, զբոսաշրջային արդյունքի մրցունակության բարձրացմանը և ՀՀ մարզերում զբոսաշրջության զարգացմանն ուղղված աշխատանքները:

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Շարունակելով 2010թ. որդեգրած քաղաքականությունը 2011թ.-ին ոլորտում իրականացման ենթակա առաջնահերթ միջոցառումներ կհանդիսանան Տարածքային զարգացման նպատակով.

-Հայաստանի մի շարք քաղաքների զարգացման տեմպերի արագացման և ներդրումային ակտիվության խրախուսման նպատակային ծրագրերի մշակումն ու իրագործումը, տարածքային զարգացման քաղաքականության իրականացում՝ ՀՀ վարչատարածքային միավորների համաչափ զարգացումն ապահովելու նպատակով,

- մարզերում հանրային ծառայությունների հասանելիության աստիճանի բարձրացումը,

-արտագնա նիստերի անցկացման միջոցով մարզերի (տարածաշրջանների, համայնքների) սոցիալ-տնտեսական զարգացման կոնկրետ հնարավորությունների վերհանումը և դրանց իրագործմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացումը,

-պետական բյուջեից և այլ աղբյուրներից ֆինանսավորվող ծրագրերի միջոցով մարզային (համայնքային) ենթակառուցվածքների գնահատումը, դրանց կարգաբերման ու զարգացման իրականացումը,-քառամյա մարզային զարգացման ծրագրերի վերանայումը, ինչը հնարավորություն կտա արտացոլել յուրաքանչյուր մարզին բնորոշ հիմնախնդիրներն ու զարգացման առանձնահատկությունները, կնպաստի տարածքային զարգացման պլանավորման կատարելագործմանը և հնարավորություն կտա տարբեր մարզերի զարգացման ծրագրերը դարձնել համադրելի,

Տեղական ինքնակառավարման համակարգի տարածքային, տնտեսական, ֆինանսական և քաղաքական դերի բարձրացման նպատակով՝ հստակորեն կսահմանազատվեն տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, ուսումնասիրություններ կիրականացվեն համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի համագործակցության գործունակ մեխանիզմների ներդրումն ապահովող օրենսդրական նախագծերի մշակման համար:

Կշարունակվեն միջոցառումներ իրականացվել “Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին” օրենքի դրույթների արդյունավետ կիրառման ուղղությամբ:

Կշարունակվեն աշխատանքները ՀՀ համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների հայեցակարգային մոտեցումների լրամշակման ուղղությամբ, հայեցակարգային մոտեցումներում նախատեսելով լրացուցիչ չափորոշիչներ, ինչպես նաև հայեցակարգային մոտեցումներից բխող օրենքների, այլ իրավական ակտերի, տնտեսական հիմնավորումների, խրախուսման ծրագրերի և այլ միջոցառումների մշակման համար կիրականացվեն անհրաժեշտ ուսումնասիրություններ:

ՏԻՄ-երի մի շարք պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար կմշակվեն համայնքներին ֆինանսական միջոցների տրամադրման կարգեր, կսահմանվեն նորմատիվներ ու չափորոշիչներ, ինչը հնարավորություն կտա բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների մատչելիությունն ու որակը:

Համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի արդյունավետության բարձրացման և տարբեր ֆինանսական կարողություններ ունեցող համայնքների միջև առկա բևեռացումների մեղմման նպատակով լրացուցիչ ուսումնա-

սիրություններ կիրականացվեն ֆինանսական համահարթեցման նոր համակարգի ներդրման հիմնավորման համար:

Համայնքներում կիրականացվեն ծրագրային բյուջետավորման ներդրման, ինչպես նաև Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Եվրամիության երկրների և միջազգային կազմակերպությունների ու բանկային կառույցների հետ համագործակցության միջոցով համայնքներում դրամաշնորհային ու վարկային ծրագրերի ներգրավման ապահովմանն ուղղված աշխատանքներ:

Կշարունակվեն աշխատանքները համայնքների բյուջեների եկամտային մասն ապահովող հարկատեսակների հավաքագրման մեխանիզմների կատարելագործման, բյուջեների ընդլայնման և վարչարարության բարձրացմանն ուղղությամբ:

Համայնքների համար կստեղծվի տեղեկատվական միասնական բանկ՝ բոլոր համայնքների տեղեկատվական կենտրոնացված շտեմարան: Հանրապետության համայնքներում կներդրվեն նաև համայնքային կառավարման տեղեկատվական համակարգեր, կիրականացվի տեղեկատվական համակարգերն օգտագործող աշխատակիցների ուսուցում և վերապատրաստում:

Ուսումնասիրություններ կիրականացվեն համայնքային ծառայության համակարգի ներդրման արդյունավետության բարձրացման նպատակով, հսկողություն կսահմանվի համայնքներում կադրային գործի վարման նկատմամբ և կապահովվի ատեստավորումների ու մրցույթների անխափան ընթացքն ու թափանցիկությունը:

Արխիվային փաստաթղթերի մշտական պահպանության և անընդհատ համալրման նպատակով 2011թ.-ին իրականացման ենթակա առաջնահերթ միջոցառումներն են լինելու՝ արխիվային նյութերի պահպանության համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերումը, այլ պետությունների հետ համագործակցության, նրանց տարածքում գտնվող հայկական պատմական, հոգևոր ու մշակութային արժեքների պահպանության նպատակով՝ ԱՊՀ և միջազգային այլ երկրների հետ արխիվագիտական կապերի ամրապնդումը, արխիվագիտության բնագավառում արդիական փորձի փոխանակումը:

Գյուղատնտեսություն

ՀՀ ագրարային հատվածում կառավարության կողմից վարվող քաղաքականությունը 2011թ. կնպատակաուղղվի գյուղատնտեսության և նրան սպասարկող կառույցների, գյուղմթերքների իրացման ու վերամշակման ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա պայմաններ կստեղծվեն ագրոպարենային ոլորտում ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքների մեղմման, հետագա զարգացման ու ընդլայնված վերարտադրության կազմակերպման, աշխատանքի արտադրողականության

բարձրացման, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացման, գյուղատնտեսությունում տնտեսվարողների համար բարենպաստ պայմանների ստեղծման, հիմնական պարենամթերքների ինքնաբավության և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման համար:

Հողօգտագործողներին հասցեական պետական աջակցության միջոցով աշխատանքներ կիրականացվեն գյուղական տարածքների անհամամասնությունների հաղթահարման և ռեսուրսային ներուժի օգտագործման մակարդակի բարձրացման, սերմնաբուծության և տոհմային գործի համակարգի ամրապնդման և զարգացման, բույսերի առավել վտանգավոր հիվանդությունների դեմ պայքարի, հողերի մելիորատիվ վիճակի բարելավման ուղղությամբ:

2011թ. կարևորվելու է հանրապետության անտառային տնտեսության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում պետական ծրագրերի իրականացումը:

Նախատեսվում է խորացնել նաև ագրարային հատվածի բարեփոխումները, որոնք ուղղված կլինեն հետևյալ խնդիրների լուծմանը.

-պետության և տնտեսավարող սուբյեկտների միջև իրավահարաբերությունների ներդաշնակեցում և այդ նպատակով համապատասխան իրավական դաշտի ձևավորում,

-տեղական արտադրողների շահերի պաշտպանության քաղաքականության իրականացման միջոցով տնտեսվարող սուբյեկտների համար նպաստավոր տնտեսական պայմանների ստեղծում և մրցունակության բարձրացում,

-գյուղատնտեսության սպասարկման և արտադրական ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի իրականացում,

-գիտակրթական, տեղեկատվական ու խորհրդատվական համակարգի կարողությունների ուժեղացում, համակարգի բարելավման մեխանիզմների ներդրում,

-ագրարային արտադրական գործընթացներում արդիական մեթոդների և տեխնալոգիաների ներդրման աջակցություն:

Որպես ագրոպարենային համակարգի զարգացման 2011թ. քաղաքականության գլխավոր նպատակ շարունակելու է պահպանվել երկրի պարենային ապահովության մակարդակի բարձրացումը: Դրա հետ մեկտեղ, հետևողական աշխատանքներ կիրականացվեն գյուղատնտեսության վարկավորման բնակավառում առկա խոչընդոտների վերացման, օրենսդրական հիմքերի բարելավման և նպատակային ծրագրերի համաֆինանսավորման միջոցով ագրարային ոլորտում տարբեր տնտեսվարման ձևերի զարգացման ուղղությամբ, ինչը նպաստավոր պայմաններ կստեղծի գյուղատնտեսական տեխնիկայի և արտադրության այլ միջոցների արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մթերքների իրացման, մասնավոր հատվածի նախաձեռնողական կարողությունների ավելացման բնագավառում

ծագած հիմնախնդիրների լուծման և տնտեսվարողների գործունեության արդյունավետության բարձրացման համար:

Էներգետիկայի և բնական պաշարների կառավարման բնագավառ

Էներգետիկայի բնագավառում իրականացվող պետական քաղաքականությունը հետևողականորեն շարունակելու է նպատակաուղղվել ՀՀ էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանը՝ էներգամատակարարման հուսալիության ապահովմամբ, էներգախնայողության միջոցառումների լայնամասշտաբ ներդրմամբ և շրջակա միջավայրի պաշտպանության պահանջների կատարմամբ:

Էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնարար ուղղություններն են լինելու՝ միջուկային նոր էներգաբլոկի կառուցման աշխատանքների իրականացման համակարգումը, սեփական վերականգնվող էներգապաշարների իրացումը, արտահանման կողմնորոշում ունեցող կայուն ու հուսալի էներգահամակարգի կառուցումը և տարածաշրջանային էներգահամակարգերի հետ ինտեգրումը:

ՀՀ 2011թ. պետական բյուջեի հատկացումների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից տրամադրվող վարկային միջոցների հաշվին կմեկնարկեն Որոտանի ՀԷԿ-երի համակարգի վերազինման, Գյումրի-2 ենթակայանի վերականգնման ծրագրերի աշխատանքները:

Հայ-ռուսական համատեղ “Մեծամոր էներգաստոմ” Փակ Բաժնետիրական ընկերության կողմից 2011թ. կիրականացվեն միջուկային նոր էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանքները:

Սեփական միջոցների և դոնոր երկրների կողմից հատկացվող միջոցների հաշվին կշարունակվեն Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի անվտանգության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը:

2011թ. նախատեսվում են հանրապետության տարածաշրջանային ինտեգրացման և սեփական էներգառեսուրսների առաջնահերթ օգտագործման հետևյալ ծրագրային միջոցառումները՝ պետություն-մասնավոր համագործակցությամբ Լոռիբերդ ՀԷԿ-ի կառուցման ֆինանսավորման սխեմայի մշակման աշխատանքների իրականացում՝ Համաշխարհային Բանկի կողմից տրամադրվող վարկի ներգրավմամբ, Արաքս գետի վրա Մեղրի ՀԷԿ-ի կառուցման աշխատանքների իրականացում, Իրանի և Հայաստանի էներգահամակարգերի միջև էլեկտրաէներգիայի փոխանակման ընդլայնման նպատակով երրորդ օղային գծի կառուցման աշխատանքների իրականացում:

ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության “ԳԱԶՊԸՆՄ” ընկերության միջև կնքված համաձայնագրով 2011թ. կավարտվեն Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկի շինարարության աշխատանքները:

Կշարունակվեն էներգետիկայի բնագավառի ազգային ստանդարտների մշակման աշխատանքները՝ Եվրամիության համապատասխան ստանդարտներին ու նորմերին դրանց աստիճանական մոտարկման մեթոդների կիրառմամբ:

Իրենց աշխատանքները կշարունակեն “էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի” հիմնադրամը՝ իր գործունեության նպատակակետում ունենալով նաև հանրային նշանակության շենքերում էներգախնայողության միջոցառումների իրականացման խթանումը, ինչպես նաև Գերմանիայի կառավարության զարգացման վարկերի բանկի կողմից նոր ֆինանսավորում ստացած “Փոքր ՀԷԿ-երի արդիականացման հիմնադրամ” ծրագիրը:

2011թ. ջերմամատակարարման բնագավառում իրականացվող աշխատանքների արդյունքում իրենց զարգացումը կստանան ջերմամատակարարման ծառայությունների առևտրայինացման ինստիտուցիոնալ, իրավական և կարգավորիչ դաշտի ձևավորման, ջերմամատակարարման վերականգնման տեխնիկապես և տնտեսապես հիմնավորված ու մատչելի սխեմաների ընտրության հետ կապված խնդիրները: Այս աշխատանքների հաջող ընթացքին կնպաստեն դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող համապատասխան ծրագրերը:

Հանրապետության գազամատակարարման համակարգի վերականգնման ու զարգացման ուղղությամբ շարունակվելու են հանրապետության բնակչության գազամատակարարման վերականգնման, գազափոխադրման ու գազաբաշխման համակարգերի, ստորգետնյա գազապահեստարանի արդիականացման աշխատանքները: Կշարունակվեն նաև գազամատակարարման համակարգի անվտանգության ապահովմանն և շարունակական բարձրացմանն ուղղված աշխատանքները:

Քիմիայի բնագավառում 2011թ. իրականացվող պետական քաղաքականության հիմնախնդիրներն են լինելու.

-բնագավառի ազգային ստանդարտների մշակման աշխատանքների իրականացումը՝ Եվրամիության համապատասխան ստանդարտներին ու նորմերին դրանց աստիճանական մոտարկման մեթոդների կիրառմամբ,

-նոր հզորությունների ստեղծումը՝ որոնք որպես հումք կօգտագործեն առկա հզորությունների արտադրանքը,

-“Քիմպրոմ” և “Նաիրիտ” ընկերությունների բազայի վրա փոքր քիմիայի զարգացումը,

-հիմնականում տեղական հումքի վրա աշխատող նոր քիմիական հզորությունների ստեղծումը,

-ժամանակակից պահանջներից բխող բնապահպանական խնդիրների լուծումը:

Ընդերքի բնական պաշարների բնագավառում 2011թ. իրականացվող պետական քաղաքականությունը նպատակաուղղվելու է հետևյալ հիմնախնդիրների լուծմանը.

-ընդերքի տնտեսական ներուժի շարունակական բացահայտմանը,

-ընդերքի պաշարների վերարտադրության, ողջամիտ, արդյունավետ և համալիր օգտագործման ապահովմանն ուղղված միջոցառումների մշակմանը,

-ընդերքի պաշարների արդյունահանման պետական երկրաբանական հսկողության իրականացմանն ուղղված տնտեսական ու իրավական մեխանիզմների մշակմանն ու կիրառմանը,

-հանրապետական երկրաբանական ֆոնդի, ընդերքի պաշարների մասին տվյալների կադաստրների՝ միջազգային չափանիշներին համապատասխան ձևավորմանն ու վարմանը, տեղեկությունների թափանցիկության ապահովմանը,

-հաստատված օգտակար հանածոների պաշարներով հանքավայրերի տարեկան հաշվեկշիռների կազմմանը,

-օգտակար հանածոների հայտնաբերման նպատակով երկրաբանական համալիր ուսումնասիրությունների իրականացման կազմակերպմանը,

-հետախուզված ընդերքի պաշարների տնտեսական գնահատման և հաստատման ապահովմանը:

2011թ. կշարունակվեն նաև Հայ-ռուսական համատեղ ընկերության կողմից ուրանի որոնողահետախուզական աշխատանքները՝ Սյունիքի տարածքում տեղաբաշխված հանքավայրերում:

Միջուկային անվտանգության բնագավառում 2011թ. միջուկային ու ռադիացիոն անվտանգության կարգավորման առաջնահերթ ուղղություններն են լինելու միջուկային օրենսդրության, միջուկային ու ռադիացիոն անվտանգության կարգավորման համակարգի կատարելագործումն ու զարգացումը:

Ոլորտում իրականացվող առաջնահերթ միջոցառումներն են հանդիսանալու.

-ՀՀ միջուկային օրենսդրության համապատասխանեցումը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) և Եվրոպական միության անվտանգության ստանդարտների, չափանիշների պահանջներին, հաշվի առնելով նաև զարգացած երկրների փորձը և նկատի ունենալով Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկի կառուցումը, ուրանի հանքի հնարավոր արդյունահանումը, “Ատոմային էներգիայի օգտագործման մասին” նոր օրենքի, միջուկային և ճառագայթային անվտանգության նոր նորմերի, կանոնների, ստանդարտների մշակումը, գործող նորմերի ու կանոնների վերանայումը, լրամշակումը,

-“Միջուկային և ռադիացիոն անվտանգության գիտատեխնիկական կենտրոն” ՓԲԸ-ի զարգացումը.

իրավաբանական և ֆիզիկական անձանց լիցենզավորումը՝ ժամանակակից մոտեցումներին համապատասխան,

-ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների կարգավորող վերահսկողության և տեսչական ստուգումների անցկացումը,

-շրջակա միջավայրի ռադիացիոն մոնիտորինգի և վերահսկողության անցկացումը,

-մասնագիտական և տեսչական անձնակազմի որակավորման բարձրացումը, (փորձի փոխանակում, վերապատրաստում, դասընթացներ),

-միջուկային և ռադիացիոն անվտանգության վերաբերյալ տեղեկատվական համակարգի (ներքին և արտաքին) կատարելագործումը,

-միջուկային զենքի չտարածման ռեժիմի ուժեղացումը, միջուկային նյութի հաշվառման և վերահսկման պետական համակարգի կատարելագործումը,

-կոմիտեի գործունեության որակի ապահովման ծրարի կատարելագործումը,

-ժամանակակից պահանջներին համապատասխանող վթարային կենտրոնի զարգացումը,

-միջազգային համագործակցության զարգացումը:

Ջրային տնտեսություն

2011թ. ջրային տնտեսության բնագավառում կարևորվելու են անցած տարիների ընթացքում կատարված բարեփոխումների շարունակման գործընթացի ապահովումը, ինչպես նաև ոլորտի զարգացման քաղաքականությունից բխող նոր հիմնախնդիրների լուծումները:

Խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման աշխատանքների բարելավման գերակա ուղղություններ են լինելու համակարգերում մասնավոր կառավարման ձևերի ամրապնդումը, կատարելագործումը, ներդրումների անհրաժեշտ ծավալների ներգրավումը, ջրային համակարգերի վերականգնմանը և զարգացմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումը, համակարգերի օգտագործման տնտեսական արդյունավետության և հուսալիության բարձրացումը, մատուցված ծառայությունների դիմաց վարձավճարների հավաքագրման մակարդակի բարձրացման և ջրի կորուստների նվազեցման նպատակով հաշվառման համակարգի կազմակերպման համալիր ծրագրերի ներդրումը, ինչպես նաև ընկերությունների ինքնաձախսաձածկման ապահովման շարունակումը:

Հասանելի և որակյալ ծառայությունների մատուցման ապահովման նպատակով 2011թ. ընթացքում շարունակվելու են ներդրումների իրականացումը ջրային ոլորտում: Ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու համակարգերի ֆիզիկա-

կան կառուցվածքների պահպանմանը և վերականգնմանը, ծառայությունների մատուցման էներգատար կառուցվածքների փոփոխմանը, համակարգերում հաշվառելիության համակարգի բարելավմանը և արդիականացմանը:

Ոլորտում նախատեսվում է իրականացնել հետևյալ հիմնական աշխատանքները.

-կազմակերպել հավատարմագրային կառավարման պայմանագրերով ստանձնված պարտավորությունների իրականացման, մոնիթորինգի և վերահսկման գործընթացները,

-ապահովել շարունակական ջրամատակարարման ծրագրերի իրականացումը “Հայջրմուղկոյուղի”, “Լոռի ջրմուղ-կոյուղի”, “Շիրակ ջրմուղ-կոյուղի”, և “Նոր-Ակունք” ՓԲԸ-ների կողմից սպասարկվող տարածքներում և նպաստել ջրամատակարարման տևողության ավելացմանը,

-Համաշխարհային բանկի, Եվրոպական վերականգնման և զարգացման բանկի, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW), ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Ասիական զարգացման բանկի և այլ դոնորների հետ իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ներդրումային ծրագրեր՝ հիմնական նպատակ սահմանելով ջրային համակարգերի կառուցման, վերակառուցման, վերանորոգման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև ապահովել ջրամատակարարման շարունակականությունը, ջրի որակի բարելավումը,

-“Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ-ի համար, միջազգային խորհրդատուի աջակցությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքների հիման վրա, ապահովել վարձակալության տրամադրման մրցութային գործընթացը,

-ապահովել և վերահսկել համակարգի կազմակերպությունների արդյունավետ գործունեությունը,

-իրականացնել ուսումնասիրություններ և համապատասխան դոնոր կազմակերպությունների հետ շարունակել աշխատանքները մաքրման կայանների վերականգնման և գործարկման ուղղություններով,

-ռոռգման հատվածում իրականացնել ֆինանսական և կառուցվածքային բարեփոխումներ,

-տարբեր դոնոր կազմակերպությունների հետ շարունակել բանակցություններ վարել համակարգի ջրամատակարար ընկերությունների կողմից չսպասարկվող և ծրագրերում չընդգրկված գյուղական համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման և ինստիտուցիոնալ բարեփոխումների նպատակով ներդրումներ և աջակցություն իրականացնելու ուղղությամբ,

-աջակցել Հազարամյակի մարտահրավերներ ծրագրի իրականացմանը,

-նպաստել ջրօգտագործողների ընկերությունների հետագա զարգացմանը, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների միությունների ստեղծմանը,

-նպաստել “Սևան-Հրազդան-ջրառ”, “Ախուրյան-Արաքս ջրառ” և “Դեբետ-Աղստև ջրառ” ՓԲԸ-ների գործունեության արդյունավետության բարձրացմանը,

-ապահովել Արփա-Սևան թունելի անխափան և անվտանգ շահագործման ու նրա տեխնիկական վիճակի բարելավման համար Աբու Դաբիի վարկային ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը,

-շարունակել կատարելագործել հաշվառման համակարգը,

-խրախուսել ջրի և էլեկտրաէներգիայի խնայողությունը,

-շարունակել բարելավել օրենսդրական դաշտը և նորմատիվային բազան,

-գործուն մեխանիզմներ ստեղծել մատուցած ծառայությունների դիմաց վճարումների գանձման համար, այդ թվում շարունակելով օգտագործել դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ուժերը:

2011թ. ընթացքում շարունակվելու է խմելու և ոռոգման համակարգերը շահագործող առևտրային ընկերությունների սուբսիդավորման քաղաքականությունը: Այն պայմանավորված է նաև վերջնական սպառողների համար սուբսիդավորման հասցեագրված քաղաքականության չհստակեցման հանգամանքով:

Տրանսպորտ և կապ

Տրանսպորտի և կապի բնագավառում 2011թ. իրականացվելիք քաղաքականության հիմնական նպատակը շարունակում է մնալ փոխադրումների և հուսալի կապի իրականացման ապահովումը՝ գոյություն ունեցող ճանապարհների (երկաթուղային, ավտոմոբիլային) ամբողջական ու արդյունավետ օգտագործմամբ, ինչպես նաև հյուսիս-հարավ ավտոմայրուղու և երկաթուղու շինարարությամբ ու կապի համակարգերի կատարելագործմամբ:

Համաշխարհային Բանկի աջակցությամբ Կենսական նշանակության ճանապարհների բարելավման երկրորդ ծրագրով 2011թ. նախատեսվում է իրականացնել շուրջ 148,7 կմ երկարությամբ ճանապարհների վերականգնման աշխատանքներ:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագրով 2011թ. նախատեսվում է իրականացնել Գյուղական համայնքները հիմնական ավտոճանապարհային ցանցի հետ կապող շուրջ 33,5 կմ երկարությամբ ճանապարհների վերականգնման աշխատանքներ, իսկ հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագրով նախատեսվում է իրականացնել շուրջ 11.5 մլրդ. դրամի ճանապարհների վերականգնման և վերակառուցման աշխատանքներ:

“Ռուսական երկաթուղիներ” ԲԲԸ-ի կողմից կազմված տեխնիկական առաջադրանքի նախագծի հիման վրա 2011թ. նախատեսվում է սկսել հյուսիս-հարավ նոր երկաթուղու՝ Մեղրի-Սիսիան- Ջերմուկ-Մարտունի-Գավառ-Գագարին ուղղությամբ 313 կմ հատվածի շինարարության տեխնիկատնտեսական հիմնավորման աշխատանքները: Ֆիզիկոտվո-Վանաձոր երկաթգծի շինարարության ֆինանսավորման նպատակով “Ռուսական երկաթուղիներ” ԲԲԸ-ի և Եվրասիական բանկի հակաճգնաժամային ֆոնդի հետ տարվելու են համապատասխան աշխատանքներ: Երկաթգիծը էապես կկրճատի Այրում-Երևան երկաթգծի երկարությունը և ուղևորների ու բեռների փոխադրման արժեքը: Այն հետագայում կարող է նաև ունենալ մեծ նշանակություն երկաթուղային միջազգային կապերի ստեղծման և ամրապնդման, ինչպես նաև Հայաստանը երկաթուղային տարանցիկ երկիր դարձնելու գործում:

Կոնցեպտիոն պայմանագրի ներդրումների շրջանակներում 2011թ. աշխատանքներ կիրականացվեն Դիլիջան-Իջևան 48.3 կմ երկարությամբ երկաթուղու վերականգնման ուղղությամբ, որի անհրաժեշտությունը պայմանավորված է Թեղուտ գյուղի մոտ սողանքային երևույթների հետևանքով երկաթուղու շարքից դուրս գալու և հաղորդակցությունը դադարեցնելու հանգամանքով:

Երկաթուղային տրանսպորտով իրականացվող ուղևորափոխադրումների կազմակերպումը բարելավելու նպատակով նախատեսվում է մշակել երկաթուղային և ավտոբուսային փոխադրումների նոր երթուղային սխեմաներ՝ փոխադրումների սկզբնակետերի ու վերջնակետերի համատեղման և միասնական կանխավճարային փաստաթղթի ներդրման ճանապարհով:

Հավատարմագրային կառավարչի ծրագրի միջոցով 2011թ. “ՀայՓոստ” ՓԲԸ-ի բարեփոխումներն ուղղված են լինելու ծառայությունների արտադրողականության, արդյունավետության և որակի բարձրացմանը, երկրի ներսում ծառայությունների մատուցման և այլ համաշխարհային փոստային օպերատորների հետ համադրելի դառնալու ահռելի մարտահրավերների լուծմանը: Ծրագրով նախատեսվում է “ՀայՓոստ”-ը դարձնել իր նմանների մեջ լավագույն ընկերությունը՝ ներդնելով միջազգային լավագույն չափանիշներ և տնտեսապես կայուն գործունեության հիմքեր: Միաժամանակ, նշված ծրագրին զուգընթաց, հավատարմագրային կառավարչի մայր ընկերությունը կհիմնադրի “ՓոստԲանկ”, որը կգործի “ՀայՓոստ”-ի հետ երկարաժամկետ ռազմավարական համագործակցության պայմանագրի ներքո:

2011թ. կշարունակվեն “Հայփոստ” ՓԲԸ-ն հավատարմագրային կառավարման հանձնելու պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության իրականացման աշխատանքները: Հաշվի առնելով հավատարմագրային կառավարչի ծրագրով նախատեսված աշխատանքների և գործառույթների իրականացման կարևոր

բությունը փոստային կապի ոլորտի ընդհանուր զարգացման առումով, նախատեսվում է նշյալ ծրագրի կատարողականի ներկայացման համար մշակել հաշվետվության նոր ձև՝ համակցելով նախանշված աշխատանքների պլանավորման հետ, նշված ծրագրով նախատեսված աշխատանքները և կատարողականները տարբերակելով ըստ մարզերի և բնակավայրերի:

Ավիացիա

Ավիափոխադրումների շուկայի ընդլայնման նպատակով 2011թ. ակտիվորեն շարունակվելու են քննարկումների և ուսումնասիրությունների իրականացումը, որը կնպաստի օդային փոխադրումների ծավալի աճին, ավիափոխադրումների աշխարհագրական ընդլայնմանը:

Ոլորտի 2011թ. գործունեության հիմնական ուղղություններն են լինելու.

-թռիչքների անվտանգության ապահովման կանոնակարգումը և դրա նկատմամբ վերահսկողությունը,

-ավիացիոն անվտանգության ապահովման կանոնակարգումը և դրա նկատմամբ վերահսկողությունը,

-օդանավերի թռիչքային պիտանիության գնահատումը,

-օդային երթևեկության կազմակերպման ապահովման կանոնակարգումը,

-օդանավակայանների (աերոդրոմների) սերտիֆիկացումը և օդանավակայանների (աերոդրոմների), վերգետնյա սպասարկման տեխնիկական միջոցների շահագործման նկատմամբ վերահսկողությունը,

-օդերևութաբանական, աերոնավիգացիոն տեղեկատվական, տեխնիկական և այլ վերգետնյա ծառայություններ մատուցող մարմինների նշանակումն ու դրանց գործունեության վերահսկումը,

- ՀՀ տարածքում պատահարների և միջադեպերի մասնագիտական քննությունը, այլ պետությունում՝ ՀՀ գրանցված կամ ՀՀ շահագործողի կողմից շահագործվող օդանավի հետ կապված նման քննության մասնակցությունը, ապահովության հարցերում առկա միտումների վերլուծությունը և ավիացիոն գործունեություն իրականացնողներին հետագա վթարների կանխարգելման նպատակով համապատասխան տեղեկատվության մատուցումը, ՀՀ տարածք թռիչքներ իրականացնող այլ պետությունների օդանավերի տեսչական ստուգումների անցկացումը,

- ՀՀ ավիացիոն անվտանգության ազգային ծրագրի ներդրումը և վարումը,

-ՀՀ-ում քաղաքացիական ավիացիայի բնագավառում որոնողական-փրկարարական աշխատանքների համակարգումը,

-ավիացիոն մասնագետների վկայագրումը և որակավորումը,

-օդային փոխադրումների կարգավորումը և լիցենզավորումը:

Քաղաքաշինություն

Շինարարության ոլորտում 2011թ. ընթացքում կարևորվում է կրթական, մարզական և մշակութային օբյեկտների կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների շարունակական բնույթի ապահովումը, ինչը կնպաստի կրթական համալիրի վերազինմանը, ուսման, մշակութային, մարզական կյանքի և անհրաժեշտ ծառայությունների մատուցման մակարդակի էական բարձրացմանը:

Գոյություն ունեցող պարտավորությունների շրջանակներում ՀՀ 2010թ. պետական բյուջեից ֆինանսավորված “Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն” ծրագիրը ևս կկրի շարունակական բնույթ, ապահովելով աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարությունը ՀՀ Արագածոտնի և Շիրակի մարզերում:

2011թ. “Բնակարանային շինարարություն” ծախսային ծրագրով ՌԴ-ի վարկային միջոցների հաշվին աղետի գոտում շարունակվելու են 2009թ. սկսված՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամասի Մարմարաշենի 7-րդ, Մուշի 7-րդ փողոցներով պարփակված, Մուշի 5-րդ փողոցին հարակից տարածքների (1200 բնակարանների՝ այդ թվում՝ ավարտման ենթակա կիսակառույց շենքերի ավարտում), Անի թաղամասի Տրդատ ճարտարապետի փողոցին հարող տարածքների (400 բնակարանների) կառուցապատման, Ախուրյան գյուղում (182 բնակարանների) և Լոռու մարզի Սպիտակ քաղաքում (354 բնակարանների) երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանաշինության աշխատանքները:

Արտակարգ իրավիճակներ

2011թ. ոլորտում նախատեսվում են իրականացնել հետևյալ աշխատանքները.

-քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ապահովում, արտակարգ իրավիճակների կանխում և հետևանքների վերացում,

-պետական պահուստի համակարգի զարգացման և բարեփոխումների հայեցակարգի ներդրում, նյութական արժեքների կուտակում, թարմացում, փոխարինում և պահպանում,

-ՀՀ տարածքում շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտների տեխնիկական անվտանգության փորձաքննության անցկացման որակական մակարդակի բարձրացում, ոլորտը կարգավորող օրենսդրական և ենթօրենսդրական դաշտի կատարելագործում, միջազգային կառույցներին ինտեգրում: Արտադրական վտանգավոր օբյեկտների հաշվառ-

ման, դրանց ռեեստրի վարման և վերլուծության իրականացման մեթոդաբանության հզորացում և կատարելագործում,

-արտադրական վտանգավոր օբյեկտներ շահագործող անձանց հետ իրականացվող գործառնությունների առավել մատչելի և դյուրին իրականացում, մեկ պատուհանի մեխանիզմի ամբողջական ներդրում,

-հիդրոօդերևութաբանական ուսումնասիրությունների մոնիթորինգի և մթնոլորտային վտանգավոր երևույթների վրա ակտիվ ներգործության աշխատանքների կազմակերպում և իրականացում: Հիդրոօդերևութաբանական տվյալների հավաքագրում, պահպանում և տրամադրում, եղանակի կանխատեսումների ապահովում,

-սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության ազգային և բազմապարամետրային դիտացանցի վերազինում և արդիականացում, մեկ տեղային դիտացանցի արդիականացման ավարտում,

-աղետների բժշկության բնագավառում ուսումնական բաժնի և բուժման ամբուլատոր համակարգի ստեղծում, հեռաբժշկության համակարգի ենթակառուցվածքի ձևավորում, սարքավորումներով ապահովում,

-միջազգային կազմակերպությունների համագործակցությամբ ուսուցողական ծրագրերի կազմակերպում, անցկացում:

Արտաքին քաղաքականություն

ՀՀ արտաքին քաղաքականության ոլորտի հիմնական խնդիրներն են համարվելու.

-Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ հանգուցալուծումը,

-Ռուսաստանի հետ դաշնակցային և ռազմավարական հարաբերությունների հետագա խորացումը,

-ԱՄՆ-ի հետ բարեկամական գործընկերության ամրապնդումը,

-Եվրոպական ընտանիքին մերձենալու արտաքին քաղաքական ուղեգծի իրականացումը, համագործակցության խորացումը ինչպես երկկողմ ձևաչափով, այնպես էլ եվրոպական կառույցների շրջանակներում,

-անմիջական հարևաններ Վրաստանի և Իրանի հետ փոխհարաբերությունների հետագա զարգացումը և ամրապնդումը,

-հայ-թուրքական հարաբերությունների առանց նախապայմանների կարգավորումը,

-տարածաշրջանային կարևոր դերակատարների՝ Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի, Բրազիլիայի հետ հարաբերությունների ընդլայնումը, արաբական և Լատինական Ամերիկայի երկրների հետ հարաբերությունների խորացումը, ասիական և աֆրիկյան երկրների հետ համագործակցության զարգացումը,

- հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը,
- արտերկրներում հայկական մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված քայլերի ապահովումը,
- օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և շահերի պաշտպանության ապահովումը,
- գլոբալ նշանակություն ունեցող սպառնալիքների, մասնավորապես ահաբեկչության և կազմակերպված հանցագործության այլ ձևերի դեմ պայքարը,
- արտաքին տնտեսական ոլորտի խնդիրների լուծման, ՀՀ էներգետիկ և տրանսպորտային անվտանգության ապահովման, արտաքին առևտրի ծավալների ընդարձակման, հայրենական արտադրանքի արտահանման նոր շուկաների որոնման համար արտաքին ներդրումների իրականացման համար նպաստավոր արտաքին պայմանների ձևավորումը և արտաքին ներդրումների ապահովումը,
- ակտիվ ներգրավվածությունը միջազգային կազմակերպություններում և բազմակողմ դիվանագիտության այլ հարթություններում:

Մփյուռք

Ոլորտի 2011թ. առաջնահերթ խնդիր է համարվելու Հայաստան-Մփյուռք գործակցության զարգացման հայեցակարգի դրույթների իրականացումը և այդ բնագավառում քաղաքականության համակարգում: Գործակցության հիմքի երեք ռազմավարական խնդիրներն են.

- աջակցել հայկական սփյուռքում հայապահպանության խնդիրների լուծմանը, օգնել ուժացման դեմ պայքարի զորացմանը՝ դպրոցի, ընտանիքի, մշակույթի և եկեղեցու միջոցով,
- համակողմանի հայտնաբերել և համախմբել սփյուռքի ներուժը և այն ներգրավել Հայաստանի կենսական խնդիրների լուծմանը,
- մշակել օտար պետություններում բնակվող հայերի հայրենադարձությանը խթանող ծրագրեր, աջակցել հայագորացմանը և հայադարձությանը:

Աշխատանքներ են տարվելու սփյուռքի մարդկային, մտավոր, ֆինանսական և կազմակերպչական հնարավորությունները հաշվառելու, յուրաքանչյուր համայնքի տվյալների շտեմարան ստեղծելու, համայնքներում զարգացման միտումները հետազոտելու ուղղությամբ:

2011թ. մշակվելու և իրականացվելու են համահայկական ծրագրեր՝ սփյուռքը Հայաստանի հետ առավել սերտացնելու, հայկական անկախ պետականության շուրջ աշխարհասփյուռ հայությանը համախմբելու ուղղությամբ:

Կարևորվելու է նաև սփյուռքի չկազմակերպված համայնքների կազմակերպումը, փոքր համայնքներում հայկական կյանքի աշխուժացումը, համայնքային կյանքի համակարգումը, կրթական, մշակութային, հոգևոր հաստատությունների ստեղծումը, որոնց կարող են նպաստել հասարակական, քաղաքական, մշակութային ոլորտներից գործիչներ գործուղելու, համայնքերի հայկական կազմակերպությունների հետ կապերն ամրապնդելու միջոցով:

Գործնականում էլ ավելի ընդգրկուն կդառնան Ջավախքի տարածաշրջանում բնակվող հայության սոցիալ-մշակութային և կրթական խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերը՝ որոնք բովանդակային առումով պետք է բխեն «ինտեգրում՝ առանց ձուլման» սկզբունքից:

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը մեծապես կօժանդակի սփյուռքագիտության ոլորտում մասնագետների պատրաստումը, վերապատրաստումը, փորձի փոխանակումը:

Օրակարգային խնդիրների շարքում կընդգրկվեն նաև Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացման իրավական հիմքերի կատարելագործման, ոլորտին առնչվող իրավական ակտերի կիրառման պրակտիկայի ընդհանրացման, սփյուռքահայերի կացության իրավունքի, երկքաղաքացիության, քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ իրավական ակտերի մշակման հարցերը:

Սփյուռքի հայ համայնքներում հայապահպանության, տեղեկատվական ակտիվ համակարգի ձևավորման, ուսուցողական և ճանաչողական առումով մեծ է նաև սփյուռքում հեռարձակվող հայկական հեռուստածրագրերի դերն ու նշանակությունը, այդ առումով աջակցություն կցուցաբերվի Հայաստան-Սփյուռք գործակցության հիմքում ընկած ամենատարբեր խնդիրների իրագեկման և լուծումների առաջադրման գործին:

Կրթություն

Կրթության ոլորտը շարունակում է մնալ որպես երկրի կայուն զարգացման, մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Հավասարապես մատչելի որակյալ կրթության ապահովման և կրթության ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով՝ կրթական բոլոր մակարդակներում իրականացվում են բարեփոխումների ծրագրեր: Ուստի այս ոլորտի զարգացումը ներկայումս երկրի զարգացման առաջնային գերակայություններից է:

Հանրակրթական հաստատությունների համակարգի արդյունավետության բարձրացման ուղղություններից մեկը առանձին գործող ավագ դպրոցների ցանցի ձևավորումն է: Այն հանրակրթության վերջին օղակն է և պետք է պատրաստի սովորողներին ինքնուրույն կյանքի և աշխատանքի շուկա մտնելուն: 2011թ.-ին առանձին գործող ավագ դպրոցների ցանցում

ընդգրկված կլինի շուրջ 150 դպրոց՝ ընդգրկելով հանրապետության ամբողջ տարածքը, և ամբողջովին ներդրված կլինի եռամյա ավագ դպրոցի ծրագիրը:

Կրթության ոլորտի բարեփոխումների շրջանակներում 2011թ. կիրականացվեն միջոցառումներ, նպատակ ունենալով երեխաներին նախապատրաստել տարրական դպրոցին, ապահովելով հավասար մեկնարկային հնարավորություններ, մեծացնել նախադպրոցական կրթության ծրագրերում երեխաների ընդգրկվածությունը՝ ներառելով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին:

Արտադպրոցական դաստիարակության ոլորտում անհրաժեշտ է նպաստել սովորողների հետաքրքրությունների և նախասիրությունների բավարարմանը, հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական, ստեղծագործական կարողությունների զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, բնապահպանական, կիրառական և հումանիտար գիտելիքների կատարելագործմանը:

Միյուրքի հայկական կրթական հաստատությունների համար 2011թ. կիրականացվեն ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակման, տրամադրման, վերապատրաստման մեկամսյա դասընթացների կազմակերպման և սիյուրքի համար մասնագիտական կադրերի պատրաստման աշխատանքներ:

Մասնագիտական կրթության բնագավառում կարևորվում է մասնագիտական կրթության որակի բարձրացմանը և աշխատաշուկայի պահանջներին, երկրի կրթական ու գիտական զարգացման ռազմավարական նպատակներին և միջազգային ստանդարտներին ու Բոլոնիայի համաձայնագրի դրույթներին դրա համապատասխանեցմանն ուղղված բարեփոխումների շարունակումը:

Հաշվի առնելով եվրոպական բարձրագույն կրթական տարածքին միանալու կարևորությունը 2011թ. նախատեսվում է մշակել բարձրագույն և հետբուհական կրթության համալիր վերակառուցման ռազմավարություն, միջոցառումներ և ժամանակացույց, եվրոպական որակավորումների շրջանակին համապատասխան որակավորումների ազգային շրջանակ, ավարտել անցումը բարձրագույն կրթության եռաստիճան համակարգին, ապահովել բարձրագույն կրթության ավարտական փաստաթղթերի փոխձանաչումը և համարժեքությունը, խթանել ուսանողների շարժունությունը:

Նախատեսվում է նաև՝ անցում կատարել գնահատման նոր համակարգին, իրականացնել փաստաթղթերի փոխձանաչման կամ համարժեքության վերաբերյալ նորմատիվ-իրավական փաստաթղթերի մշակման, ավարտական փաստաթղթերի փոխձանաչման, աշխատանքային շուկայի հետ կապերի և միջբուհական համագործակցության խթանման, միջբուհական համատեղ կրթական ծրագրերի ձևավորման աշխատանքներ:

2011թ. կարևորվելու է նաև Հայաստանյան ուսանողների անարգել միջբուհական տեղափոխումների և միջազգային շարժունության համար նպաստավոր պայմանների ստեղծումը, ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման համակարգի մշակումը և ներդրումը, ուսման վարկավորման համակարգի ներդրումը և վերապատրաստման դասընթացների կազմակերպումը:

Հայաստանում նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումների հիմնական նպատակներն են՝ ՄԿՈՒ հաստատությունների ինտեգրումը կրթության գլոբալ համակարգերին, ՄԿՈւ որակավորումների համակարգի համապատասխանեցումը որակավորումների եվրոպական շրջանակին, կրեդիտների կուտակման և փոխանցման միասնական համակարգի ներդրումը, մասնագիտական կրթության ոլորտում տեղեկատվության փոխանակման համակարգի ստեղծումը, մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվության արդյունավետ համակարգի ստեղծումը, մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերության ձևավորումը, ՄԿՈՒ հաստատությունների օպտիմալ ցանցի ձևավորումը, մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման (ՄԿՈՒ իրականացման) որակի բարելավումը: Նախատեսվում է Հայաստանում գործող որակավորումների համակարգի կառուցվածքը համապատասխանեցնել Որակավորումների Եվրոպական Շրջանակին, ձևավորել սոցիալական երկխոսության միջավայր՝ ազգային, մարզային և տեղական մակարդակներով, սոցիալական գործընկերներին ներգրավել մասնագիտական կրթության քաղաքականության և ռազմավարության մշակման, մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման գործընթացներում:

Գիտության ոլորտ

Ոլորտի 2011թ. գերակա խնդիրներն են լինելու.

-հանրապետության գիտական և գիտատեխնիկական ներուժի զարգացումը, դրա ռացիոնալ տեղաբաշխումը և պահպանումը, գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, հասարակության մտավոր ներուժի վերարտադրությունը,

-գիտության ոլորտի զարգացման ու բնականոն գործունեության ապահովումը, որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն,

-գիտական և գիտատեխնիկական քաղաքականության մշակումը և իրականացումը,

-ինովացիոն (նորարարական) քաղաքականության մշակման ու իրականացման գործընթացին մասնակցությունը, ՀՀ հիմնարար ու կիրառական գիտության և գիտատեխնիկական արդյունքի ու բարձր տեխնոլոգիաների ներդրմանը աջակցությունը:

Գիտության ոլորտի բարեփոխումների հիմնական նպատակն է գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումը, որում վճռորոշ դերակատարություն պետք է ունենա պետությունը: Դրա համար առաջնահերթ անհրաժեշտ է.

- ձևավորել գիտության ոլորտի պետական կառավարման արդյունավետ համակարգ,
- Բարձրացնել գիտությանը ուղղվող ֆինանսավորման ծավալները և ֆինանսավորման արդյունավետությունը,
- իրականացնել գիտության ոլորտում համապատասխան ինստիտուցիոնալ բարեփոխումներ,
- բարձրացնել գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը,
- արդիականացնել գիտության ոլորտի ենթակառուցվածքը և նյութատեխնիկական բազան,
- ստեղծել գիտական ոլորտի գիտական փորձաքննության անկախ համակարգ,
- գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորումը վերածել իրական դրամաշնորհային համակարգի,
- ապահովել գիտության և կրթության ինտեգրումը,
- ապահովել գիտական ներուժի վերարտադրությունը և երիտասարդեցումը,
- նպաստել գիտական արդյունքի ապրանքայնացմանն ու դրանց դուրսբերմանը ներքին և արտաքին շուկաներ:

ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծով հաստատվելիք հատկացումների շրջանակում նախատեսվում է.

- մրցութային կարգով ընտրելու միջոցով գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման շրջանակներում հիմնարար, կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերի իրականացում, որով կբացառվեն պետության կողմից հատկացվող ֆինանսական միջոցների փոշիացումը,
- գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման շրջանակներում գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերի իրականացում,
- գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական հայտերի (դրամաշնորհների) մրցույթների՝ ներառյալ հատուկ երիտասարդական դրամաշնորհային մրցույթների, անցկացում, ինչը կնպաստի գիտական ներուժի երիտասարդացմանը և որոշակիորեն կմեղմի գիտության ոլորտից երիտասարդ կադրերի արտահոսքը, այդ թվում՝ նաև արտերկիր:

Շարունակվելու են 2010թ. մեկնարկած գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրերի նպատակային-ծրագրային ֆինանսավորումով 6 ծրագրերից 5-ը և ավելանալու են ևս 2 նոր ծրագրեր, այդ թվում՝ «Գիտական և գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող Հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքները:

ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծի գիտության մասով ընդգրկված ծրագրերը միտված կլինեն գիտության ոլորտում բարեփոխումների իրականացմանը, գիտական հետազոտությունների զարգացմանը, գիտական ներուժի երիտասարդացմանը, գիտահրատարակչական գործունեության արդիականացմանը և գիտական ու գիտատեխնիկական բնագավառում միջազգային համագործակցության խթանմանը:

Առողջապահություն

Ոլորտում իրականացվող բարեփոխումները ուղղված են լինելու համակարգի կազմակերպական ու կառուցվածքային վերափոխումների, օրենսդրական դաշտի բարելավմանը, առողջապահության ֆինանսավորման համակարգի կատարելագործմանը, ոլորտի օպտիմալացմանը և արդիականացմանը, ոլորտում սեփականության բազմաձևության խթանմանը, արտաքին ու ներքին կապիտալի ներհոսքին, կրթական համակարգի արդիականացմանը, բժշկական օգնության կազմակերպման կատարելագործմանը:

Առողջապահության ոլորտի զարգացման դինամիկ քաղաքականության ապահովման նպատակով կարևորագույն հիմնախնդիր է դիտվում բնագավառի օրենսդրական դաշտի բարելավումը: Այդ նպատակով առաջնային է դիտարկվում ոլորտի գործունեությունը հիմնականում կանոնակարգող «Առողջապահության մասին» և «Հանրային առողջության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքների ընդունումը:

Բուժօգնության համակարգի զարգացումը շարունակաբար ուղղված է լինելու նրա մատչելիության, որակի բարելավման, կառավարելիության, կազմակերպման արդյունավետության և ֆինանսավորման կատարելագործմանը, այդ թվում՝ բնակչությանը մատուցվող բժշկական օգնության փոխհատուցման բազմաձևության (պետական պատվեր, համավճար, բժշկական ապահովագրություն, վճարովի ծառայություններ և այլն) իրականացմամբ բուժօգնության ստանդարտների աստիճանական ներդրմանը, որակի բարելավմանը և վերահսկմանը, բուժօգնության տարբեր օղակների միջև փոխկապակցվածության աստիճանի բարձրացմանը:

Ելնելով այն իրողությունից, որ առողջապահության ոլորտում գործող բուժկազմակերպություններն իրենց թվաքանակով, հզորություններով և կադրային ներուժով զգալիորեն գերազանցում են (այդ թվում՝ պետության կողմից երաշխավորված ծրագրերով ձևավոր-

ված) պահանջարկը, առաջիկա տարիներին կշարունակվի 2001թ.-ին սկսված առողջապահության համակարգի օպտիմալացման գործընթացը:

Կշարունակվի ընտանեկան բժշկության համակարգի ներդրման աշխատանքները, որն աստիճանաբար կփոխարինի և կկատարելագործի գույություն ունեցող ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության համակարգը: Առաջիկա տարիներին ևս կշարունակվի առաջնային բուժօգնության համակարգի դերի և նշանակության բարձրացմանն ուղղված ռազմավարության քաղաքականությունը: Սկսած 2006թ.-ից ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում իրականացվում է անվճար բուժօգնություն տեղամասային թերապևտների, տեղամասային մանկաբույժների, ընտանեկան բժիշկների և նեղ մասնագետների կողմից՝ ամբողջ բնակչության համար, անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից, առանց այցելությունների սահմանափակման, ինչպես նաև՝ ըստ բժշկական ցուցումների, լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ, ինչը շարունակվելու է նաև հաջորդ տարի:

Բնակչության անապահով խավի համար պետական նպատակային ծրագրերի հասցեականության բարձրացման և աղքատության հաղթահարման համատեքստում որպես գերակա ուղղություն է դիտվում առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով բուժօգնության առաջնային օղակի վրա: Բնակչության անապահով խավերի համար բուժօգնության մատչելիությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ապահովել հասարակության բոլոր ինստիտուտների մասնակցությունը և համակարգված գործողությունները:

Հատուկ ուշադրություն է դարձվելու համայնքներում բուժօգնության, առողջության առաջնային պահպանման ոլորտի դերի ամրապնդմանն ու գործունեության բարելավմանը, ինչպես նաև գյուղական ազգաբնակչության առողջության առաջնային պահպանմանը, բժշկական ծառայությունների մատչելիության և դրանց որակի բարձրացման ապահովմանը: Այդ նպատակին ուղղված առաջին քայլերից է արդեն սկսված գյուղական ամբուլատորիաների և բուժակ մանկաբարձական կետերի վերանորոգումը, ժամանակակից սարքավորումներով վերազինումը և մասնագետների ուսուցումը:

Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության բնագավառում տարվող քաղաքականության հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում ապահովել բնակչության համաճարակային անվտանգությունը, նվազեցնել բնակչության հիվանդացությունը՝ վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդություններից ու թունավորումներից:

Անհրաժեշտ է 2011թ. վերահաստատել կանանց և երեխաների առողջության հարցերի գերակայությունը ազգային մակարդակով՝ ապահովելով նրանց առողջության և սնուցման

բարելավմանն ուղղված նպատակային ծրագրերի շարունակական իրագործումը, նույն թվում՝ կրճքով սնուցման խրախուսումը, հղիների նախաձեռնողական խնամքի և շուրջձեռնողական որակյալ բուժօգնության տրամադրումը:

Աղիքային և այլ ինֆեկցիոն բժշկական օգնության ծառայությունների շրջանակներում նախատեսվում է երեխաների հիվանդանոցային բուժօգնության գների մոտեցում շուկայականին, որը մի կողմից կնպաստի բուժօգնության որակի բարձրացմանը, իսկ մյուս կողմից, ստվերային վճարումների ծավալի կրճատմանը: Մեծահասակ բակչության համար նախատեսվում է ներդնել բուժօգնության ֆինանսավորման համավճարային սկզբունքը:

2010թ.-ի երկրորդ կիսամյակից Արաբկիր ԲԿ-ում փորձարարական եղանակով ներդրվել է բուժօգնության կազմակերպման և ֆինանսավորման համավճարային եղանակը: Փորձի ամփոփման արդյունքների հիման վրա 2011թ.-ից նախատեսվում է ընդլայնել համավճարով աշխատող բուժհաստատությունների ցանկը և համավճարը դիտարկել որպես բուժօգնության կազմակերպման և ֆինանսավորման լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրներ:

Երեխաների բուժօգնության հարցում հատուկ ուշադրություն է դարձվելու որակի բարելավման և հիվանդությունների կանխարգելման միջոցառումներին՝ ներառյալ պատվաստումների և երեխայի առողջ աճի ու զարգացման ծրագրերի իրականացմանը: Նախատեսվում է երեխաների բուժօգնության մասով լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացում, որը հնարավորություն կտա բարձրացնել երեխաների բուժօգնության գները՝ այն մոտեցնել շուկայական գներին: Դրանով կապահովվի բուժօգնության մատչելիության և որակի բարձրացումը, ինչպես նաև ստվերային վճարումների կրճատումը:

Դեղային և տեխնոլոգիական քաղաքականությունը հիմնականում ուղղված է լինելու դրանց մատչելիության, անվտանգության և կիրառման արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև ավելի արդիական ու արդյունավետ դեղերով ապահովմանը: Սոցիալապես հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններով (տուբերկուլյոզ, հոգեկան խանգարումներ, դիաբետ, չարորակ նորագոյացություններ և այլն) տառապող հիվանդներին, դեղորայքով անխափան և շարունակական ապահովման համար նախատեսված է համապատասխան դեղամիջոցների ձեռքբերում՝ կենտրոնացված միջոցների հաշվին, որոնք կարիքավորներին կտրամադրվեն պոլիկլինիկաների (դիսպանսերների պոլիկլինիկական բաժանմունքների) միջոցով և նրանց հսկողության ներքո:

Բժշկական կրթության, գիտության և կադրային բնագավառում տարվող քաղաքականության հիմնական նպատակներն են լինելու կադրային ներուժի օպտիմալացումը, բժշկական մասնագիտական կազմերով հանրապետության ողջ տարածքում համաչափ հագեցվածության ապահովումը, բժշկական կրթության կառուցվածքի և ստանդարտների

մոտեցումը միջազգային չափանիշներին, բժշկագիտության ներուժի արդյունավետ կիրառման համար պայմանների ստեղծումը:

Սոցիալական պաշտպանության ոլորտ

Սոցիալական պաշտպանության ոլորտին ուղղվող բյուջետային միջոցները նախորդ տարվա նկատմամբ աճում են 27.4 մլրդ. դրամի չափով 2010 թվականի 244.6 մլրդ. դրամի դիմաց: Ջանքերն առավել կկենտրոնացվեն աշխատաշուկայի լարվածության մեղմման, իրականացվող ծրագրերի հասցեականության մեծացման, ծառայությունների որակի ու մատչելիության բարձրացման ուղղությամբ: Կշարունակվեն կենսաթոշակային համակարգի բարեփոխումները: Քայլեր կձեռնարկվեն սոցիալական պաշտպանության ծրագրերի միջոցով ժողովրդագրական իրավիճակի բարելավման ուղղությամբ: Սոցիալական պաշտպանության համակարգը եվրոկառույցների ամրագրած հիմնարար սկզբունքներին առավել համահունչ դարձնելու նպատակով կընդլայնվի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ:

Սոցիալական աջակցության բնագավառում շարունակում է հրատապ մնալ սոցիալական աջակցության տարբեր ուղղությունների, մասնավորապես ընտանեկան նպաստի, հասցեականության բարձրացման հարցը:

2009-2010թթ. հասցեականության մեծացմանն ուղղված միջոցառումների շնորհիվ հնարավոր դարձավ ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների թվի պահպանման պայմաններում համակարգում ընդգրկել նոր՝ տնտեսական ճգնաժամի հետևանքով ընտանեկան նպաստի կարիք ունեցող ընտանիքների:

2011թ.-ին նպաստառու ընտանիքների թիվը կկազմի 110.2 հազ. ընտանիք 2010թ. 110.7 հազ. ընտանիքի դիմաց, իսկ նպաստի միջին ամսական չափը կմնա անփոփոխ 2010թ.-ի համեմատությամբ (2010թ. մայիսի 1-ից, գազի սակագնի փոփոխությամբ պայմանավորված, նպաստի միջին ամսական չափը դարձել է 26.9 հազ. դրամ 2010թ. հաստատված պետական բյուջեի 23.4 հազ. դրամի դիմաց): Շարունակվելու է այդ նպատակի համար նախատեսված ֆինանսական միջոցների ուղղումն առավել աղքատ ընտանիքներին, առավելապես երեխա ունեցող ընտանիքներին, մասնավորապես բազմազավակ ընտանիքներին:

Զբաղվածության բնագավառում պետական քաղաքականությունն ուղղված կլինի աշխատաշուկայի լարվածության մեղմմանը, աշխատանք փնտրողների մրցունակության բարձրացմանը, գործատուների մոտ առկա թափուր աշխատատեղերի արդյունավետ համալրմանը: Երիտասարդների, այդ թվում՝ աշխատաշուկայում անմրցունակ խմբերի, մասնավորապես՝ հաշմանդամների զբաղվածության ապահովմանն աջակցելու նպատակով կներդրվեն նոր ակտիվ ծրագրեր:

Աշխատանքային իրավահարաբերությունների քաղաքականության բնագավառում աշխատողների իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության մեխանիզմների օրենսդրական ապահովման, գործարար միջավայրի բարելավման, իրավակիրառական պրակտիկայում ի հայտ եկած առանձին խնդիրների կարգավորման, աշխատանքային հարաբերությունների ծագման և դադարման հիմքերի առավել պարզեցման և հստակեցման, ինչպես նաև աշխատանքային հարաբերությունների նկատմամբ պետական հսկողության և վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակներով կշարունակվեն ՀՀ աշխատանքային օրենսդրության համալիր բարեփոխումները:

Աշխատանքի վարձատրության բնագավառում բարեփոխումները նպատակաուղղված կլինեն աշխատանքի արդյունավետության խթանմանը, աշխատանքի վարձատրության պետական երաշխիքների ապահովմանն ու աշխատողների իրավունքների օրենսդրական պաշտպանվածության ամրապնդմանը:

Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի բնագավառում նախատեսվում են իրականացնել աշխատանքներ՝ ուղղված առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության, հաստատություններում նրանց խնամքի, դաստիարակության, ուսման և ֆիզիկական զարգացման նպատակով նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Կշարունակվեն հաստատություններից ընտանիքներ երեխաների տեղավորման քաղաքականությունը, “Խնամատար ընտանիք” և հաստատությունների բեռնաթափման ծրագրերը:

Կշարունակվի թրաֆիքինգի գոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայությունների մատուցման ծրագիրը և կիրականացվեն “Գենդերային քաղաքականության հայեցակարգի” շրջանակներում նախատեսվող միջոցառումները:

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի բնագավառում կշարունակվեն հաշմանդամների սոցիալական ներառման, նրանց համար հասարակական կյանքի բոլոր բնագավառներում հավասար հնարավորությունների և հավասար իրավունքների ապահովման, բժշկական, սոցիալական-հոգեբանական և մասնագիտական վերականգնման, ինչպես նաև տարեցների սոցիալական սպասարկման բարելավման և նրանց կյանքի որակի բարձրացման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: 2011 թվականին նախատեսվում է տարեցների շուրջօրյա խնամքի տուն-ինտերնատներում խմանվողների թիվը դարձնել 1050 մարդ 2010 թվականի 1010 մարդու դիմաց:

Կպատվիրակվեն ծառայություններ ոչ պետական կազմակերպություններին, ինչպես նաև կշարունակվի տարեցներին և հաշմանդամներին համայնքահեն ծառայությունների տրամադրումը:

Կենսաթոշակային ապահովության բնագավառում ՀՀ կառավարության գործունեության գերակա ուղղություն է շարունակելու մնալ կենսաթոշակային բարեփոխումների իրականացումը՝ ՀՀ կառավարության ծրագրի և Կայուն զարգացման ծրագրի համաձայն:

Վերը նշվածի շրջանակներում, նախատեսվում է ամբողջացնել կամավոր կենսաթոշակային ապահովագրության իրականացումն ապահովող կառուցակարգերը (համապատասխան ենթաօրենսդրական և գերատեսչական իրավական ակտերի մշակում, կամավոր կենսաթոշակային ապահովագրություն իրականացնող կազմակերպությունների (կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների) լիցենզավորում և այլն), որի արդյունքում 2011թ.-ից կգործարկվի կամավոր կենսաթոշակային ապահովագրության համակարգը:

Միաժամանակ, նախատեսվում է սկսել կենսաթոշակային հաշիվների վարման տեղեկատվական համակարգի, ինչպես նաև եկամտահարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի մշակման աշխատանքները՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության հաստատած՝ կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը:

Լայնամասշտաբ բնույթ կկրի նաև կենսաթոշակային բարեփոխումների մասին հանրային իրազեկման աշխատանքների իրականացումը՝ համաձայն կառավարության հաստատած ծրագրի:

Միաժամանակ, աշխատանքներ կտարվեն հաշմանդամության կենսաթոշակի իրավունքի (չափի) և հաշմանդամ անձի աշխատունակության աստիճանի միջև ուղղակի կապ ապահովելու ուղղությամբ:

Ժողովրդագրության բնագավառում 2011թ.-ին՝ “ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին” ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 2-ի թիվ 27 արձանագրային որոշման և ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված տարեկան ծրագրի շրջանակներում, կիրականացվեն ժողովրդագրական իրավիճակի բարելավմանն ուղղված միջոցառումներ, ինչը նպատակաուղղված է ծնունդների խրախուսմանը, կյանքի սպասվող տևողության մեծացմանը, արտագաղթի ծավալների նվազեցմանն ու ներգաղթի խթանմանը, բնակչության ծերացման հետևանքների հաղթահարմանը, բնակչության առողջության և հատկապես՝ վերարտադրողական առողջության բարելավմանը, ընդհանուր կրթության, բնակչության գիտելիքների, սեռական և վերարտադրողական մշակույթի մակարդակի բարձրացմանը, սոցիալական բոլոր խմբերի համար առողջ վերարտադրողական կյանքի հավասար հնարավորությունների ապահովմանը, բնակչության տարածքային բաշխվածության անհամամասնության սահմանափակմանը:

Կշարունակվեն ժողովրդագրական քաղաքականության հիմնական ուղղությունների շուրջ հանրային իրազեկման միջոցառումները:

Մշակույթի ոլորտ

2011թ. ոլորտի զարգացման հիմնական ուղղություններն են հանդիսանալու.

-մշակութային ժառանգության (հուշարձաններ, մշակութային արժեքներ, ոչ նյութական մշակույթ) պահպանությունը,

-ժամանակակից արվեստի զարգացումը և տարածումը,

-մշակութային կրթություն և գեղագիտական դաստիարակության իրականացումը,

- գրքարվեստի և տառարվեստի զարգացումը,

- տեղեկատվության ձեռքբերման և մամուլի աջակցումը,

-մշակույթի համաչափ զարգացումը,

-միջազգային համագործակցության ընդլայնումը,

-ազգային փոքրամասնությունների մշակույթի զարգացումը:

Կշարունակվեն միջմարզային մշակութային համագործակցության “Մշակութային մարզ” ծրագրի շրջանակներում մայրաքաղաքի թատերահամերգային կազմակերպությունների հյուրախաղերը մարզերում, դրամաշնորհների միջոցով պետական աջակցության տրամադրումը մարզերում և համայնքներում առկա ազգագրական համույթներին, թատերական խմբերին, կիրառական արվեստի վարպետներին: Հանրապետական նշանակության միջոցառումների անցկացման ապակենտրոնացման նպատակով կշարունակվեն ծրագրային և ժանրային բազմազանություն ապահովող հանրապետական փառատոների, մրցույթների, ցուցահանդեսների կազմակերպումը մարզերում:

Կշարունակվեն աշխատանքները “Կիևյան նախաձեռնություն” ծրագրի շրջանակներում:

Կշարունակվի համագործակցությունը ԱՊՀ ծրագրերի շրջանակներում՝ մասնավորապես ակտիվ համագործակցություն կիրականացվի ԱՊՀ Հումանիտար համագործակցության խորհրդի /ՀՀԽ/ ու հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի /ՀՀՄՀ/ հետ:

Հայրենիք-սփյուռք կապերի ամրապնդման ու մշակութային համագործակցության խորացման նպատակով կշարունակվի սփյուռքում գործող կազմակերպությունների և մշակութային միությունների հետ համագործակցության ծրագրերի իրականացումը, խրախուսվելու են հայրենիքում ու արտերկրում գործող հայ արվեստագետները՝ կկազմակերպվեն սփյուռքահայ արվեստագետների հոբելյաններ, աջակցություն կցուցաբերվի սփյուռքում

գործող պարային և թատերախմբերի հյուրախաղերին, նկարիչների ցուցահանդեսներին, զրոյների և գրահրատարակիչների համաժողովներին և այլն:

Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրականացվելու են օլիմպիական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստմանը, բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովմանը, ՀՀ-ում գործող մանկապատանեկան մարզադպրոցներում աշխատող մարզիչ-մանկավարժների և ղեկավար կազմի սոցիալական վիճակի բարելավմանը, նրանց վերապատրաստմանը, ֆիզկուլտուրային-առողջաբարական զանգվածային, հանրապետական և մարզային միջոցառումների անցկացմանը, հաշմանդամային սպորտին, մարզական-հասարակական կազմակերպություններին պետական աջակցությանը ուղղված աշխատանքներ, մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին անհրաժեշտ մարզագույքով ապահովման միջոցով:

Միջին մասնագիտական կրթություն և արտադպրոցական դաստիարակության ասպարեզում իրականացվելիք աշխատանքները ուղղված են լինելու մանկապատանեկան մարզադպրոցներում պարապոդների հոգևոր և ֆիզիկական զարգացմանը, ռազմա-հայրենասիրական դաստիարակությանը, ինչպես նաև նրանց կողմից ընտրված մարզաձևերից ունակությունների ձեռքբերման և կատարելագործման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը ու մատուցվող ծառայությունների ապահովմանը:

2011թ.-ին նախատեսվող սպորտի ոլորտի պետական քաղաքականության ուշադրությունը բևեռվելու է ՀՀ ազգային մարզական ֆեդերացիաների և մասսայական սպորտի զարգացմանը:

Երիտասարդական ոլորտում 2011թ. իրականացվող քաղաքականությունը ենթադրում է զարգացնել մարզերում իրականացվող երիտասարդական պետական քաղաքականությունը (մարզային երիտասարդական կենտրոնների գործունեության ապահովում և սահմանամերձ շրջանների երիտասարդության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացում), բարձրացնել հասարակական, քաղաքական զարգացումներին նրանց մասնակցության աստիճանը, նպաստել երիտասարդության գործունեությունն ապահովող իրավական դաշտի զարգացմանը, երիտասարդության շրջանում հոգևոր-մշակութային և գիտական մակարդակի բարձրացմանը, ազատ ժամանցի ակտիվ և նպատակային կազմակերպմանը, ուսումնասիրել առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և բարելավել երիտասարդների կենսապայմանները, հայտնաբերել և խրախուսել տաղանդավոր երիտասարդներին, նպաստել երիտասարդության շրջանում հայրենասիրական դաստիարակության, քաղաքացիական

գիտակցության բարձրացմանը, ակտիվացնել, զարգացնել համագործակցությունը միջազգային երիտասարդական կառույցների հետ, ստեղծել պայմաններ երիտասարդությանը անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովելու և երիտասարդների լիակատար ինքնադրսևորման համար:

Բնապահպանության ոլորտ

Բնապահպանության ոլորտում 2011թ. ՀՀ կառավարության կարևորագույն և գերակա նպատակներն են լինելու.

- երկրում բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը,
- հանրապետության շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական և բուսական աշխարհի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա վնասակար ներգործությունների նվազեցումը և կանխարգելումը,
- բնական պաշարների պահպանության, վերականգնման, վերատադրության և արդյունավետ օգտագործման ապահովումը,
- ընդերքի և հողերի պահպանության ապահովումը,
- Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռության վերականգնումը, ՀՀ ջրի ազգային ծրագրի իրականացման ապահովումը,
- շրջակա միջավայրի վիճակի դիտարկումների և ուսումնասիրությունների ապահովումը,
- շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելումը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների կառավարումը,
- բնապահպանական կառավարման բնագավառում վարչարարության կատարելագործման նպատակով մասնավոր և հանրային հատվածների համագործակցության մեխանիզմների զարգացման և ներդրման գործընթացների ապահովումը, բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության ուժեղացումը և միջազգային կոնվենցիաներով Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարումը:

2011թ. շարունակվելու են Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող «Հարավային Կովկասի տարածաշրջանում էկոտարածաշրջանային բնապահպանական և Հայաստանի Ջավախքի (Աշոցքի) շրջանում պահպանվող տարածքների ստեղծում» դրամաշնորհային ծրագրերը:

Բյուջեների կազմման բնագավառում

2011 թվականին հետևողականորեն շարունակվելու են բարեփոխումները բյուջեների կազմման բնագավառում՝ ծրագրային բյուջետավորման տարրերի արմատավորման և խորացման ուղղությամբ:

Հարկային, մաքսային քաղաքականության և վարչարարության ոլորտ

2011թ. հարկային և մաքսային քաղաքականությունն ուղղված կլինի վերջին տարիներին վարվող քաղաքականության միտումների զարգացմանը: Մասնավորապես.

-կպարզեցվեն հարկ վճարողների հարկման և հաշվառման ընթացակարգերը, կնվազեցվեն հարկերի վճարման հաճախականության եւ ներկայացվող հարկային հաշվետվությունների քանակը,

-աշխատանքներ կիրականացվեն հարկային պարտավորություններից ավել վճարված գումարների՝ պետական բյուջեից հետ վերադարձման մեխանիզմների կատարելագործման, նոր գերավճարների և ապառքների առաջացման կանխարգելման, ինչպես նաև հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունների ինքնագնահատման մեխանիզմների կատարելագործման ուղղությամբ,

Կշարունակվեն մաքսային օրենսդրության պարզեցման, դրանց պահանջների կատարման նկատմամբ հսկողության ընդլայնմանը, մաքսային ընթացակարգերի պարզեցման, մաքսային համակարգում ինքնահայտարարագրման մեխանիզմի կիրառման ընդլայնմանը, մաքսատների կարողությունների զարգացմանը, մաքսային հսկողության կատարելագործմանն ուղղված աշխատանքները:

Պետական եկամուտների վարչարարության ոլորտում 2011թ. նախատեսվում են իրականացնել միջոցառումներ՝ հետևյալ ուղղություններով.

-ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն ամբողջական ծավալով իրականացնելու է աշխատանքներ 2011 թ.-ի պետական բյուջեով նախատեսված հարկերի և պարտադիր վճարների ապահովման ուղղությամբ:

-կշարունակվեն իրականացվել հարկերի կամավոր վճարման (ինքնահայտարարագրման) սկզբունքի ամբողջական կիրառմանն ուղղված աշխատանքները՝ զուգահեռաբար կրճատելով տնտեսավարող սուբյեկտ-մաքսային ծառայող և տնտեսավարող սուբյեկտ-հարկային ծառայող շփումները,

-կշարունակվեն բարձրացվել հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների քանակը և որակը,

-կիրականացվեն աշխատանքներ հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի ամբողջական կիրառման ուղղությամբ,

-կընդլայնվեն ինքնահայտարարագրման համակարգը և մաքսային միջնորդի ինստիտուտի գործարկման շրջանակները:

Կվերջնականացվեն մաքսային համակարգում էլեկտրոնային հայտարարագրման համակարգի ներդրման աշխատանքները,

-կշարունակվեն միջոցներ ձեռնարկվել տնտեսության մեջ փաստաթղթաշրջանառության ամբողջական շղթայի վերականգնման ուղղությամբ՝ սկսած ապրանքների ներմուծումից, արտադրությունից մինչև դրանց վերջնական սպառումը,

-կշարունակվեն աշխատանքները հարկային և մաքսային մարմինների կողմից իրականացվող հսկողության արդյունավետության բարձրացման ուղղությամբ,

-համապատասխան աշխատանքներ կիրականացվեն երրորդ անձանցից ստացված տեղեկությունների մշակման և դրանց հիման վրա կամերալ ուսումնասիրությունների իրականացման, ավտոմատ համակարգերի մշակման և ներդրման ուղղությամբ,

-կներդրվեն հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների ընդլայնմանը, սպասարկման որակի բարձրացմանն ուղղված ռազմավարական նոր ուղղություններ:

Կշարունակվեն այլ երկրների հարկային և մաքսային մարմինների հետ փոխհարաբերությունների ակտիվացման աշխատանքները՝ տնտեսական իմաստով առավել հետաքրքրություն ներկայացնող համապատասխան միջազգային համաձայնագրեր կնքելու միջոցով, որոնք միջազգային հարկային հարաբերություններում հնարավորություն կընձեռեն ապահովելու ինչպես տեղեկատվության արդյունավետ փոխանակումը, այնպես էլ հսկողական աշխատանքների համար արժանահավատ տեղեկատվության ապահովումը:

Կշարունակվեն ռիսկերի կառավարման հիման վրա հարկային գերավճարների, ներառյալ ԱԱՀ-ի գծով վերադարձի ավտոմատացված համակարգի ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները:

Կշարունակվեն աշխատանքները մաքսային համակարգում ՀՀ մաքսային տարածք մուտք գործող և տարանցիկ մաքսային ռեժիմով տեղաշարժվող տրանսպորտային միջոցների նկատմամբ հսկողության իրականացման համակարգի ներդրման ուղղությամբ:

Միջազգային փորձի ուսումնասիրման արդյունքում զգալի աշխատանքներ են նախատեսվում իրականացնել սահմանների միասնական կառավարման ուղղությամբ:

Կիրականացվեն աշխատանքներ սահմանային անցման կետերը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Պետական եկամուտների հավաքագրման համաչափության և կայուն աճի ապահովման նպատակով կշարունակվեն աշխատանքները խոշոր տնտեսվարող սուբյեկտների կողմից վճարվող հարկերի ճիշտ և ժամանակին հավաքագրման ուղղությամբ, այդ թվում՝ զարգացնելով առանձին հարկ վճարողների մոտ հարկային ներկայացուցիչների ինստիտուտը:

Կամրապնդվի հարկային մարմնի ներքին աուդիտի գործառույթը՝ ամբողջական կիրառման արդյունքում նպաստելով հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը:

Հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման նպատակով կներդրվի կատարողականի և մասնագիտական կարողությունների հիման վրա պաշտոնական առաջխաղացման գործուն համակարգ:

Կիրականացվեն լայնածավալ աշխատանքներ հարկային և մաքսային իրավախախտումների, մասնավորապես՝ հարկերի վճարումից խուսափելու, մաքսանենգության, մաքսային կանոնների խախտումների, առանց ապրանքների մատակարարման հաշվարկային փաստաթղթերի դուրսգրման դեպքերի բացահայտման և պատասխանատվության միջոցների լիարժեք ու հետևողական կիրառման ուղղությամբ, միաժամանակ մաքսային մարմինների կողմից առավել խիստ պատասխանատվության կենթարկվեն մաքսանենգություն իրականացնողները:

Պետական եկամուտների վարչարարության նոր մշակույթի ձևավորման շրջանակներում կձեռնարկվեն քայլեր արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների և ընդհանրապես բոլոր հարկատու սուբյեկտների իրազեկման և թափանցիկության ապահովման ուղղությամբ:

Կիրականացվեն զգալի աշխատանքներ հարկային մարմնի SS ենթակառուցվածքների կատարելագործման և տեղեկատվական հոսքերի որակի բարձրացման ուղղությամբ: Մասնավորապես, կապահովվի “Հարկատու 3” էլեկտրոնային կառավարման համակարգի ամբողջական ներդրումը:

Կշարունակվեն հարկային և մաքսային ընթացակարգերի ավտոմատացման նպատակով ստեղծված շուրջ երկու տասնյակ աշխատանքային խմբերի կողմից էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման շրջանակներում տեխնիկական առաջադրանքների մշակման և ավարտման, ինչպես նաև հարկային և մաքսային ընթացակարգերի բիզնես-պրոցեսների նկարագրման աշխատանքները:

Պետական եկամուտների հավաքագրման բնագավառում առանձնահատուկ տեղ է հատկացվելու հարկային և մաքսային մարմինների տեխնիկական վերազինման աշխատանքներին:

Պետական գույքի կառավարում

Պետական գույքի կառավարման և մասնավորեցման ոլորտում 2011թ. նախատեսվում է.

-ապահովել պետական գույքի կառավարման քաղաքականության շարունակությունը և գործող ծրագրի գործողության ժամկետում ավարտին հասցնել պետական գույքի մասնավորեցման հիմնական գործընթացը,

-բարձրացնել առևտրային կազմակերպությունների պետական բաժնեմասի կառավարման արդյունավետությունը և արդյունքում տեղական ու օտարերկրյա ներդրողների համար առավել գրավիչ դարձնել մասնավորեցվող օբյեկտների նկատմամբ գրավչությունը,

-զարգացնել պետական գույքի հաշվառման ու գույքագրման համակարգը, շարունակել պետական գույքի նկատմամբ պետության սեփականության իրավունքների գրանցման աշխատանքները,

-ապահովել մասնավորեցվող առևտրային կազմակերպություններում ներդրումների իրականացման և սոցիալական երաշխիքների ապահովման առաջությունը,

-պետական գույքի կառավարումից ու մասնավորեցումից ստացված միջոցների հաշվին ավելացնել պետական բյուջեի եկամուտները,

-պետական գույքի կառավարման ծրագրի շրջանակներում իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնց շնորհիվ կապահովվի պետական գույքի օգտագործման արդյունավետությունը,

-հստակ սահմանել պետական գույքի կառավարման տարբեր մակարդակներում կառավարիչների (աշխատակազմի ղեկավար, գործադիր տնօրեն, լիազոր ներկայացուցիչ) աշխատանքի վերահսկողության և գնահատման համակարգ,

-կառավարման ոլորտում ապահովել մասնակիցների շահերի ներդաշնակությունը:

Անշարժ գույքի կադաստր

Ոլորտում իրականացվող քաղաքականությունը ուղղված է լինելու պետական միասնական կադաստրի վարման համակարգի արդյունավետ կառավարման ապահովմանը և դրա կառավարման արդյունավետ մեխանիզմների ներդրմանը:

2011թ. կիրականացվեն անշարժ գույքի ու նրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման աշխատանքների մատչելիության ու հասանելիության բարձրացմանը, մատուցվող ծառայությունների էլեկտրոնայնացմանն ուղղված աշխատանքներ, որոնց իրականացման արդյունքում հնարավոր կլինի զգալիորեն բարձրացնել մատուցվող ծառայությունների որակը, ապահովել անշարժ գույքի գույքային շրջանառության մատչելիությունը, կրճատել տվյալների բազայից տեղեկատվության (ինչպես տարածական, այնպես էլ իրավական) ստացման համար ծախսվող ժամանակը, նվազեցնել պետական պաշտոնյաների հետ քաղաքացիների շփումը:

Գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտում կշարունակվեն պետական մասշտաբային շարքի բազային քարտեզների (տեղագրական, կադաստրային) թվային ֆոնդի ստեղծման և թարմացման աշխատանքները՝ հիմնված նորագույն՝ արբանյակային և վերգետնյա հանութային տեխնոլոգիաների վրա:

Հողաշինարարության և հողային ռեսուրսների արդյունավետ կառավարման համակարգի ձևավորման ուղղությամբ աշխատանքներ կիրականացվեն համակարգի ձևավորման, պետական և համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման և օգտագործման տրամադրման հրապարակային սակարկությունների մեխանիզմների կատարելագործման ուղղություններով, աջակցություն կցուցաբերվեն հողերի միավորման ծրագրերին և հողի շուկայի ձևավորմանը:

Շուկայական մեխանիզմների վրա հիմնված հարկման ռեժիմ սահմանելու նպատակով, կներդրվի անշարժ գույքի ու հողի գնահատման նոր համակարգ և կիրականացվեն աշխատանքներ անշարժ գույքի միասնական հարկին անցման ուղղությամբ, ինչպես նաև անշարժ գույքի շուկայի իրավիճակի փոփոխությունների բացահայտման և կադաստրային գնահատման կարգերի կատարելագործման միջոցառումներ:

Անշարժ գույքի շուկայում գնագոյացմանը համահունչ կադաստրային գնահատման կարգերի սահմանման նպատակով, անհրաժեշտ է անշարժ գույքի կադաստրային արժեքի հաշվարկման համար կիրառել շուկայական մեթոդների վրա հիմնված սկզբունքներ, հողամասը և դրա վրա կառուցված շինությունները դիտարկել և գնահատել որպես անշարժ գույքի մեկ միասնական միավոր: Անշարժ գույքի շուկայական մեթոդների վրա հիմնված միասնական գնահատման կարգերի մշակման նպատակով պարբերաբար կիրականացվեն համակարգված դիտարկումներ, որի հիմնական խնդիրն է անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվության ապահովումը, անշարժ գույքի կադաստրային գնահատման կարգերի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների մշակումը՝ հողամասերի և շենքերի ու շինությունների միասնական գոտիների սահմանների նկարագրում, տարածագնահատման միասնական գոտիականության գործակիցների և բազային արժեքների դուրս բերում, ինչպես նաև անշարժ գույքի կադաստրային միասնական գնահատման բանաձևերի մշակման և հետագա կատարելագործման առաջարկությունների ներկայացում:

Պետական վիճակագրություն

Պետական վիճակագրության հիմնական խնդիրների և հիմնարար սկզբունքների ապահովման նպատակով 2011թ. մասնավորապես նախատեսվում է.

-վիճակագրության միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանման համատեքստում շարունակել վիճակագրության ինստիտուցիոնալ վերափոխման գործընթացները, հետամուտ լինելով նաև վիճակագրական հարաբերությունները կարգավորող օրենսդրական համապատասխան փոփոխությունների իրականացմանը,

-վիճակագրական մեթոդաբանության շարունակական կատարելագործման, միջազգային չափանիշների հետ դրա ներդաշնակեցման ու միասնականացման, ինչպես նաև վիճակագրական ցուցանիշների միջազգային համադրելիության ապահովման նպատակով՝ շարունակել և ընդլայնել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության միջազգային համագործակցությունը,

-վիճակագրական տվյալների որակի և թափանցիկության ապահովման նպատակով՝ շարունակել տեղեկատվության տարածման միջազգայնորեն ընդունված չափանիշների ներդրման ու կիրառման աշխատանքները (մասնավորապես՝ ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի սահմանված “Տվյալների տարածման հատուկ ստանդարտի”), որոնք ենթադրում են նաև Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջի անխափան շահագործում և տեղեկատվության կազմի ու որակի, ինչպես նաև մեթոդաբանական տվյալների պարբերական արդիականացում,

-վիճակագրության մեթոդաբանության զարգացմանը զուգընթաց շարունակել ներկայումս գործող վիճակագրական դիտարկման փաստաթղթերում արտացոլված ցուցանիշների կազմի ու բովանդակության վերանայման, վիճակագրական դիտարկման փաստաթղթերի միասնականացման աշխատանքները՝ նպատակ ունենալով նվազագույնի հասցնել տեղեկատվության որակի, ամբողջականության և արժանահավատության վրա վերջինիս հնարավոր բացասական ազդեցությունները, ինչպես նաև հնարավորինս նվազեցնել վիճակագրական տեղեկություններ տրամադրողների ծանրաբեռնվածությունը,

-համալրել, արդիականացնել և ամբողջականացնել (նվազագույնը՝ ամենամյա պարբերականությամբ) բիզնես-ռեզիստրի տվյալների բազան (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի մասով) և որպես դրա հետևանք՝ աստիճանական անցում կատարել տեղեկատվության հավաքագրման ընտրանքային եղանակների ներդրմանն ու կիրառմանը,

-շարունակել տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգման ու կողավորման միասնական համակարգի մաս կազմող ազգային դասակարգիչների մշակման ու ներդրման (ներառյալ՝ վիճակագրության համար տարածքային միավորների ընդհանրական դասակարգչի, անհատական սպառման՝ ըստ նպատակների դասակարգչի, վիճակագրական միավորների դասակարգչի և այլն), ինչպես նաև արդեն իսկ պետական վիճակագրությունում ներդրված ու կիրառվող դասակարգիչների կատարելագործման

աշխատանքները (ներառյալ՝ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի և արտադրանքի դասակարգչի նախատեսվող հիմնարար փոփոխությունների տեղայնացման հանգամանքը),

-անցում կատարել վարչական ռեգիստրների միջոցով տեղեկատվության հավաքագրման մեխանիզմի ամբողջական կիրարկմանը, հաշվի առնելով պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրերով սահմանված համապատասխան աշխատանքների իրականացման ապահովումը,

-տեղական (համայնքային) վարչական ռեգիստրների (ներառյալ՝ համայնքների անձնագրերի) ներդրմանը և վարմանը զուգընթաց կատարելագործել և ընդլայնել տարածքային վիճակագրության վարման համար անհրաժեշտ ցուցանիշների կազմն ու բովանդակությունը,

-շարունակել գենդերային կտրվածքով վարվող վիճակագրության ամբողջականացմանն ուղղված աշխատանքները,

-ցուցանիշների նախապատրաստման օպերատիվության ապահովման, ինչպես նաև աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմամբ և կիրառմամբ իրականացնել միջոցառումներ տեղեկատվության էլեկտրոնային հավաքագրման ուղղությամբ,

-շարունակել երկրի սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ցուցանիշների գծով վիճակագրական տեղեկատվություն պարունակող, ինչպես նաև ոլորտային ու տարածքային առանձնահատկությունները բնութագրող վիճակագրական հրապարակումների (տեղեկագրեր, ժողովածուներ և այլն) թողարկումը, ինչպես նաև ընդլայնել դրանց կազմը, բովանդակությունն ու թեմատիկ ընդգրկումը՝ վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) պահանջարկի առավել ամբողջական և օպերատիվ բավարարման նպատակով,

-կատարելագործել վիճակագրական տեղեկատվության սպառողների (օգտագործողների) համար ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական ինտերնետային էջից ժամանակի իրական ռեժիմով ամփոփ տեղեկատվության ստացման մեխանիզմը:

Հասարակական կարգի պահպանություն

2011թ. ոլորտում շարունակվելու է բարեփոխումները հասարակական կարգի պահպանման, հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, ոստիկանության կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի և մատչելիության, գործունեության թափանցիկության ապահովման, բնակչության մոտ վստահության ամրապնդման ուղղությամբ:

Նշված բարեփոխումներն ամբողջական և լիարժեք իրականացնելու համար անհրաժեշտ է ներդնել օրենսդրական և վարչարարական նոր համակարգեր, նախատեսել պրակտիկ կիրառության նոր գործիքներ և մեթոդներ:

Մասնավորապես 2011թ. նախատեսվում է իրականացնել.

-կառուցվածքային բարեփոխումներ (առանձին ստորաբաժանումներում անցում քաղաքացիական հատուկ ծառայության, ոստիկանության ստորաբաժանումների գործառույթների կրկնության բացառում, լիազորությունների հստակեցում, ստորաբաժանումների վերակազմակերպում)՝ քառաստիճան ոստիկանական համակարգի ներդրում՝ կենտրոնական ապարատ, տարածքային, տեղամասային և ոստիկանական հենակետեր: Այսինքն, պետք է հնարավորինս ապակենտրոնացնել ոստիկանական համակարգը՝ նախատեսելով առանձին ոստիկանակետերի ստեղծումը:

-կրթական բարեփոխումներ (ոստիկանի մասնագիտության հիմնում, ոստիկանական կրթության առաջադիմական ստանդարտների ներդրում, առանձին նեղ մասնագիտություններով ոստիկանների պատրաստում, առաջխաղացման համար ոստիկանների ուսուցում, վերապատրաստում և ատեստավորում),

-ճանապարհային երթևեկության անվտանգության բնագավառի բարեփոխումներ (կենտրոնացված դիտակետերի ստեղծում, GPS համակարգի գործարկում, խախտում հայտնաբերող սարքերի տեղադրում, անձնակազմի ուսուցում և այլն),

-քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ (քաղաքացիների առանձին իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ, մասնավորապես քրեադատավարական երաշխիքներ, եթեր, ցույցեր և հանրահավաքներ անցկացնելու լրացուցիչ երաշխիքների ապահովում, մասնագիտացված ոստիկանական ստորաբաժանումների ստեղծում և այլն),

-քաղաքացիություն ստանալու (դադարեցնելու), օտարերկրացիների էլքի և մուտքի հետ կապված գործընթացների հստակեցում, ոստիկանության կողմից իրականացվող միգրացիոն վարչարարության կատարելագործում,

-նոր անձնագրային համակարգի ներդրում,

-թրաֆիկինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացում,

-կազմակերպված հանցավորության, կոռուպցիայի, փողերի լվացման, համակարգչային հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացում,

-այլ մարմինների և կազմակերպությունների հետ համագործակցության բարելավում (ապահովել լայն համագործակցություն իրավապահ մարմինների, այլ պետական և տեղա-

կան ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հետ, խորացնել միջազգային համագործակցությունը),

-նստիկանության նկատմամբ վստահության բարձրացմանն ուղղված բարեփոխումներ (թեժ գծի արդյունավետության բարձրացում, քաղաքացիների դիմում-բողոքների հաշվառման և վերահսկողության միասնական համակարգի ստեղծում, հասարակության և ԶԼՄ-ների հետ համագործակցության բարելավում),

-նստիկանների սոցիալական և իրավական պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ: